Ազգ
Azg
22 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2010 ՈՒՐԲԱԹ 193 (4573)
ISSN: 1829-1651

# Թոշակառուները ԱԺ պատգամավորներին հիշեցնում են նախընտրական խոստումները

«Թոշակառուների հայկական միավորում» կազմակերպությունը երեկ «**Ազգի**» խմբագրություն էր բերել միավորման բաց նամակը ԱԺ պատգամավորներին: Նամակի մեջ, մատնանշելով ապրանքների եւ կոմունալ ծառայությունների գների բարձրացումները վերջին երկու տարվա ընթացքում, թոշակառուների գերակշիռ մասի անմխիթար սոցիալական կացությունը, թոշակառուները դիմում են Ազգային ժողովի պատգամավորներին՝ խնդրելով չմոռանալ նախընտրական խոստումները եւ 2011-ի բյուջեի քննարկման ժամանակ առաջադրել թոշակների «առնվազն 20-25 տոկոսով բարձրացման հարցը»: Դա, նամակի հեղինակների կարծիքով, «նաեւ նախապայմաններ կստեղծի հանրապետության նախագահի 2012-ի համար տված խոստումների իրականացման համար»:

Ա. Ս.

# Պանրի գների աննախադեպ բարձրացումը՝ հայկական ագահության հերթական դրսեւորում

## *Տնտեսական բացատրություն պարզապես գոյություն չունի*

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Դժվար է ասել, թե ինչ պատահեց Հայաստանում պանիր արտադրողների հետ, որ նրանք մեկ մարդու նման որոշեցին բարձրացնել իրենց արտադրանքի գները: Եթե նրանք ոգեւորվեցին ԱԺ-ում բյուջեն ներկայացնելիս վարչապետի հիշատակած «Հայկական պանիր» ծրագրից եւ որոշեցին կտրուկ բարձրացնել իրենց արտադրանքի գինը, ապա երեւի այնքան էլ լավ չեն հասկացել, որ Տիգրան Սարգսյանը խոսում էր կառավարության աջակցությամբ վերոնշյալ անվանմամբ միջազգային ապրանքանիշ ստեղծելու եւ հայկական պանրի արտահանմանն աջակցելու, այլ ոչ թե տեղական շուկայում պանրի գների բարձրացման մասին: Մինչդեռ պանիրը հայերիս համար, հացից հետո ամենակարեւոր եւ ամենաշատը սպառվող սննդեղենն է: Ինչեւէ:



Նախ ներկայացնենք, թե որքա՞ն է թանկացել պանիրը:

Մի քանի օր առաջ հայկական «Լոռի» տեսակի պանիրները (Տաշիրի, «Աշտարակ կաթի», «Էկոկաթի», Մարտունու եւ մյուս բոլոր գործարանների) վաճառվում էր 1 կգ-ը 1600-1800 դրամի սահմաններում, իսկ «Սուլուգունի» տեսակի պանիրները՝ 2100-2400 դրամ 1 կգ-ի համար: Սակայն մեկ գիշերվա մեջ այս թվերը փոփոխվեցին՝ 1 կգ «Լոռի» պանրի գինը բարձրացավ մինչեւ 2000-2500 դրամի, իսկ «Սուլուգունի» պանրինը մինչեւ 1 կգ-ն 2700-2900 դրամի:

Հիմա փորձենք դիտարկել, թե ի՞նչ տեղի ունեցավ:

Նախ հիշեցնենք, որ Հայաստանում այս կամ այն սննդամթերքի գների նման կտրուկ աճը սովորաբար պայմանավորվում էր երկու փոխլրացնող գործոններով՝ միջազգային գների աճով եւ տվյալ ոլորտներում գերիշխող դիրք ունեցողների թելադրանքով: Սրանցից ո՞րն է առկա պանրի շուկայում: *Տես էջ 2*

# Մայր աթոռը դատապարտում է հուշարձանի պղծումը

Հոկտեմբերի 19-ին Երեւանում պղծվել է Հոլոքոստի հուշարձանը: Կատարվածի առնչությամբ Մայր աթոռ Սուրբ Էջմիածնից ստացանք դատապարտող հայտարարություն, որում նշված է. «Հուշարձանի պղծումն ու այլատյաց ոգով արված գրությունը վկայում են արարքի հեղինակների նեղմտության մասին: Մայր աթոռ Սուրբ Էջմիածինը բազմիցս ամենատարբեր առիթներով դատապարտել է ժողովուրդների միջեւ թշնամություն տարածելու նմանատիպ գործողությունները, մասնավորապես ազգային սրբություններ եւ նվիրական հիշատակներ համարվող հուշարձանների պղծումն ու վանդալական ոչնչացումը: Ազգային փոքրամասնությունների նվիրական հուշարձանների հանդեպ կատարված ոտնձգությունները հարիր չեն Ցեղասպանություն ապրած եւ աշխարհի ամենատարբեր երկրներում իբրեւ ազգային փոքրամասնություն ներկայացնող հայ ժողովրդի զավակներին»:

ՅԱԳԼԱՆԴԻ «ԼՂՈՁՎԱԾ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

# «Ա1+», մարտյան իրադարձություններ եւ Ադրբեջան-Թուրքիա նույնացում



Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար **Թորբյորն Յագլանդը** երեկ ժամանել էր Հայաստան՝ ամփոփելու հոկտեմբերի 19-ին Երեւանում մեկնարկած «հանուն ժողովրդավարական ապագայի» ֆորումը: Ամփոփմանը հաջորդած ասուլիսում հայաստանյան լրատվամիջոցների գրեթե բոլոր հարցերին ԵԽ գլխավոր քարտուղարն այնքան ընդհանրական պատասխաններ տվեց, որոնք կարելի է տարբեր կերպ մեկնաբանել ու հասկանալ՝ նայած ինչ տեսանկյունով է անհրաժեշտ վերաբերմունք արտահայտել:

Արձագանքելով «Ա1+» հեռուստաընկերությանն առնչվող իրավիճակին եւ խնդիրներին, մասնավորապես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից «Ա1+» հեռուստաընկերության հայցի բավարարման ֆոնին հեռուստաընկերությանը եթեր վերադարձնելու առնչությամբ Յագլանդը նշեց, որ Եվրոպայի խորհուրդը հետեւում է իրադարձություններին եւ տարբեր պաշտոնյաների առջեւ բարձրացնում այդ խնդիրները: Յագլանդի խոսքերով, Հայաստանը դեռեւս ժողովրդավարական գործընթացի մեջ է, եւ Եվրոպայի խորհուրդը օգնում է, որ գործընթացը ճիշտ ուղղությամբ ընթանա:

Նմանատիպ մի պատասխան էլ հնչեց այն հարցի առնչությամբ, թե ինչ է անում Եվրոպայի խորհուրդը մարտյան իրադարձությունների ժամանակ տեղի ունեցած սպանությունների բացահայտման ուղղությամբ: Ինչ վերաբերում է մարտյան իրադարձություններից հետո կատարված ձերբակալություններին եւ դեռեւս բանտարկության մեջ գտնվողներին «քաղաքական բանտարկյալ» որակելուն, ապա Յագլանդը միայն ընդգծեց, որ «Եվրոպայում քաղաքական բանտարկյալներ չպետք է լինեն»: Յագլանդի խոսքերով, ԵԽ մարդու իրավունքների հանձնակատար Թոմաս Համմարբերգն ուժեղ մանդատ ունի եւ մշտապես հետեւում է նմանատիպ խնդիրներին:

ԵԽ գլխավոր քարտուղարը տեղեկացրեց, որ երեւանյան այցելության իր օրակարգում չի եղել հանդիպում բանտարկյալների հետ: Միեւնույն ժամանակ, այդ հարցը Հայաստանի ներքին գործն է, որին Եվրոպայի խորհուրդը միջամտել չի կարող:

Պատասխանելով Ադրբեջանի ռազմատենչ հայտարարությունների՝ ԵԽ արժեքներին համապատասխանելու մասին հարցին՝ Թորբյորն Յագլանդը սկսեց կրկին ընդհանրական ձեւակերպումներից, թե Մինսկի խմբի գործընթացն է տվյալ հարցի ձեւաչափը: Դրանից հետո, չգիտես ինչու, ամենայն հավանականությամբ շփոթելով Հայաստան-Ադրբեջան հարաբերությունները Հայաստան-Թուրքիա իրավիճակի հետ՝ Յագլանդը սկսեց խոսել արձանագրություններից ու դրանք կրկին քննարկման դաշտ վերադարձնելու կարեւորությունից:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Ուժային մեթոդները կամ պատժամիջոցները Իրանի հարցում լուծում գտնելու տարբերակ չեն

**Իրանի հետ Հայաստանն ունի դինամիկ զարգացող հարաբերություններ, լավ տնտեսական համագործակցություն, իրականացրել եւ շարունակում է իրականացնել տարբեր համատեղ ծրագրեր, հատկապես էներգետիկ եւ տրանսպորտի բնագավառներում: Այս մասին երեկ հայտարարել է Հայաստանի ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը՝ անդրադառնալով լրագրողների այն հարցին, թե արդյոք Հայաստանը միանո՞ւմ է Իրանի դեմ պատժամիջոցներին:**

**Նալբանդյանի խոսքով, Հայաստանն ու Իրանն ակտիվ շփումներ ունեն, փոխայցելություններ: «Վերջերս ես գտնվում էի Իրանում, ներկայումս պատրաստում ենք Հայաստանի վարչապետի այցելությունը Իրան, մի քանի օր առաջ Հայաստանում էր Իրանի խորհրդարանի նախագահ պարոն Լարիջանին», որպես փոխադարձ այցելությունների եւ շփումների բարձր մակարդակի վկայություն է ներկայացրել Նալբանդյանը:**

**«Մեր հարաբերությունները փոխշահավետ են, եւ մտադիր ենք դրանք զարգացնել», նշել է արտգործնախարարը: Ինչ վերաբերում է պատժամիջոցներին, ապա, ըստ Նալբանդյանի, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի որոշումները իհարկե պետք է հարգվեն ՄԱԿ-ի անդամ բոլոր պետությունների կողմից, ինչպես դա պահանջում է ՄԱԿ-ի կանոնադրությունը: «Չենք կարծում, որ ուժային մեթոդներով կամ պատժամիջոցներով կարելի է լուծումներ գտնել»:**

**Նալբանդյանը հույս է հայտնել, որ Իրանի միջուկային ծրագրի շուրջը համաձայնություններ եւ լուծումներ կգտնվեն բանակցությունների միջոցով՝ Իրանի եւ միջազգային հանրության համատեղ ջանքերով:**

Ա. Հ.

# Վաղվա «Ազգ. Մշակույթ-Հավելվածում»

Շարունակում ենք Արշիլ Գորկու արվեստի մասին ամերիկացի արվեստաբան քննադատ Մայքլ Թեյլորի հոդվածների շարքը՝ Հակոբ Ծուլիկյանի թարգմանությամբ:

Ժամանակ եւ գրականություն. Գուրգեն Մահարին ժամանակի գրական մամուլի եւ միջավայրի տեսադաշտից դուրս: Գրողի կենսամատենագիտության՝ Գրիգոր Աճեմյանի ամբողջացման փորձը:

Հալեպահայ գրող Թորոս Թորանյանի ամառային հանդիպումը աստղաֆիզիկոս Գրիգոր Գուրզադյանի հետ. հայացք գիտնականի էսսեների վերջին երեք գրքերին: Նաեւ մեր անդրադարձը գիտնականի եղբոր՝ ճարտարապետ Սարգիս Գուրզադյանի նորընծա ալբոմին:

Հայր Կոմիտաս վրդ. Հովնանյանի՝ հակադարձող անդրադարձը Վ. Թեքեյանի «սեռային կողմնորոշման» վերաբերյալ վերջերս հրապարակված մի շարք կարծիքներին:

Մ. Բ.

# Շիրակի պատմամշակութային ժառանգությանը նվիրված հերթական գիտաժողովը դառնում է միջազգային

Այսօր Գյումրիում կմեկնարկի Շիրակի պատմամշակութային ժառանգությանը նվիրված հերթական՝ 8-րդ եռօրյա գիտաժողովը, որի կազմակերպիչը ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնն է (ՇՀՀԿ): Կենտրոնի ղեկավար, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Սերգո Հայրապետյանը**, նախօրյակին հրավիրած մամուլի ասուլիսում կարեւորելով 1994 թվականից ի վեր կազմակերպված նախորդ յոթ հանրապետական գիտաժողովների դերը եւ անդրադառնալով առաջիկա համաժողովին, նշեց որ, նախ, այս օրերի ընթացքում Գյումրիում հավաքվում է հայագիտության տարբեր ոլորտների առաջատար մասնագետների մի բավական ստվար բանակ, այս անգամ՝ մոտ 50 գիտնականներ: Շիրակին նվիրված այս գիտական նստաշրջանները ոչ միայն հայտածում են մարզի տարածքում հայագիտական հետազոտությունների մակարդակը, այլ նաեւ ուրվագծում են պատմաազգագրական այս գոտուն առնչվող պատմագիտական, հնագիտական, ազգագրական, բանահյուսական, արվեստաբանական, ժողովրդագրական եւ այլ ուսումնասիրությունների հետագա ընթացքը: Իսկ ամենակարեւորը, պրն Հայրապետյանի գնահատմամբ, դրանց բերած նպաստն է մեր ազգային գաղափարախոսության կերտման գործին, որովհետեւ, վերջին հաշվով, առանց հայագիտության ազգային գաղափարախոսություն ունենալ հնարավոր չէ:

Կատարվող աշխատանքի արդյունքները եւս շոշափելի են: «Մենք վերջին գիտաժողովից հետո հրատարակել ենք մոտ տասը խոշոր մենագրություն, տարին մեկ անգամ լույս տեսնող «Գիտական աշխատություններ» երեք ժողովածու,- ասաց ՇՀՀԿ ղեկավարը:- Սկսել ենք հրատարակել «Շիրակի հնագիտական եւ պատմազգագրական ուսումնասիրություններ» մատենաշար, որի առաջին հատորը վաղը կներկայացնենք գիտական հավաքի մասնակիցների դատին: Պատրաստ է նաեւ գիտաժողովի նյութերի ժողովածուն՝ մոտ 320 էջ ծավալով»:

Շիրակի պատմամշակութային ժառանգությանը նվիրված 8-րդ գիտաժողովին տեղի եւ հանրապետության հայագետներից բացի մասնակցելու են նաեւ մոտ մեկ տասնյակ մասնագետներ արտերկրից: «Ունենք երկու ճապոնացի ճարտարապետներ, որոնք մեր մարզի տարածքում վանական համալիրների, եկեղեցիների կառուցման ճարտարապետական առանձնահատկություններն են ուսումնասիրում: Կան իտալացի մասնակիցներ, հյուրեր Ֆրանսիայից, Վրաստանից, Ռուսաստանից», նշեց Ս. Հայրապետյանը:

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ
Գյումրի

# «Լեզվի մասին» օրենքի փոփոխությունը՝ հոգեբանական գործոն

Մերոնց անհետեւողականությունը զարմացնող աստիճանի է: Ընդամենը երկու շաբաթ հետո այն լսումներից, երբ Ազգային ժողովի նախագահը հայտարարեց, թե օտարալեզու դպրոցների (դրանք պաշտոնապես անվանվում են այլընտրանքային, հեղինակային, փորձարարական, միջազգային կրթական ծրագրեր իրականացնող) խնդիրը լուծվելու է միայն «Հանրակրթության մասին» օրենքի փոփոխություններով, եւ «Լեզվի մասին» օրենքը դուրս է գալու փաթեթից, հոկտեմբերի 20-ին տեղի է ունենում Ազգային ժողովի կրթության, գիտության, մշակույթի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի հերթական նիստը, որտեղ ինչ-որ մի ֆոկուսով հայտնվում է «Լեզվի մասին» օրենքի փոփոխությունների նախագիծը («Հանրակրթության մասին» օրենքի փոփոխությունների հետ միասին) եւ անգամ հավանության արժանանում (դեմ են քվեարկել միայն «Ժառանգությունից» Անահիտ Բախշյանն ու ՀՅԴ-ից Լիլիթ Գալստյանը): Ազգային ժողովի կայքէջի՝ հանձնաժողովի նիստի մասին լրատվության մեջ նշված է, որ ԿԳ նախարար Արմեն Աշոտյանի ներկայացմամբ՝ հանձնաժողովը երկրորդ ընթերցմամբ քննարկել է կառավարության հեղինակած «Լեզվի մասին» եւ «Հանրակրթության մասին» օրենքների նախագծերի լրամշակված փաթեթը: Աշոտյանի տեղեկացմամբ՝ «Լեզվի մասին» օրենքից հանվել են բովանդակային փոփոխություններ նախատեսող դրույթները եւ միայն այնտեղ ներդրվել է «Հանրակրթության մասին» օրենքով այդպիսի (այլընտրանքային եւ այլն-Մ.Խ.) կրթական ծրագրերը սահմանող դրույթ: Մի խոսքով՝ այս դպրոցների ստեղծման համար հարկավոր օրենսդրական հենքի ոչ միայն բովանդակությունն է (11 ոչ պետական հաստատություն, երկուսը՝ Դիլիջանում եւ Ջերմուկում, 9՝ միջպետական կամ միջկառավարական համաձայնագրով) իր տեղում եւ շուտով երեւի երկրորդ ընթերցմամբ կյանքի ուղեգիր կստանա, այլեւ, այնուամենայնիվ, մեր օրենսդիրները չեն խուսափելու արդեն հոգեբանական նշանակություն ձեռք բերած «Լեզվի մասին» օրենքի փոփոխությունից՝ հարմարեցնելով այն այս դպրոցների ստեղծման համար փոփոխություններին: Ասել է թե՝ կառավարության այս նախաձեռնությունը առաջիկա քառօրյայում էլի աղմուկ հանած օրինագծերի հիթը կարող է դառնալ՝ հասարակական ռեզոնանսի պատճառով: Մերոնք միշտ «ֆայմեին», եւ դա տեսանելի էր օտարալեզու դպրոցների բացման օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ վերջին խորհրդարանական լսումների ժամանակ՝ դրանք վերածվեցին միտինգի, որ, այնուամենայնիվ, «Լեզվի մասին» օրենքը փոխելու եւ օտար լեզվով դպրոց բացելու կառավարության՝ այդպես էլ իրական շարժառիթը չբացահայտած մղումը դեռ չի ստացել հասարակությանը նյարդայնացնող ռեսուրսը: Եվ եթե անգամ նախաձեռնողները հավատում են իրենց արած քայլի դրական ասպեկտին (է՛լ կրթության որակի բարձրացում, է՛լ եսիմ ինչ արգումենտներ) եւ չեն վախենում նախաձեռնությանը հակադրվող շերտերի ոչ թե իրավական, այլ զուտ էմոցիոնալ դիմակայությունից, գոնե պետք է վախենային տարբեր պատճառներով նյարդային բացասական լիցքեր կուտակած հասարակության տարբեր զանգվածներին՝ այս օրինագծի դեմ պայքարելու շուրջը ինքնակազմակերպվելու առիթ տալուց: Բայց մերոնք թքած ունեն հասարակական կարծիքի վրա: Նրանք չեն պատկերացնում, որ հասարակությունը չի ըմբռնելու «Լեզվի մասին» օրենքի՝ փոքր փոփոխությամբ խնդրին իբր իրավական գրագետ լուծում տալու բացատրությանը, կամ՝ օրենքի ընդդիմախոսների բարձրացրած աղմուկին ի պատասխան՝ օրենքի ընդդիմախոսներին «կարծրատիպերով առաջնորդվողներ» անվանելը դեռ համոզիչ արգումենտ չէ: Իսկ տարբեր պատճառներով կուտակված դժգոհության ու մաղձի ալիքն ուղղորդվելու է այսպիսով, հերթական այս առիթով դեպի իշխանություն: Ասել է թե՝ կարճատեւ նպատակահարմարությունների հետեւում մերոնք չեն տեսնում հեռահար մի խնդիր՝ հասարակությանը նոր լարումների առիթներ չստեղծելու պարագան:

Այս բոլորով հանդերձ՝ չի կարելի վստահ լինել, որ չեն լինի փաթեթի, եւ հատկապես «Լեզվի մասին» օրենքի՝ «իրավական խնդիր լուծող» այդ մի դրույթի երկրորդ ընթերցումը վիճարկող պատգամավորներ, քանի որ կան այնպիսիք, որոնց կարծիքով առաջարկները բովանդակային են, դրանք առաջին ընթերցում պիտի դեռ անցնեն, թեեւ Արմեն Աշոտյանը պնդում էր, որ դրա հարկը չկա՝ փոփոխությունները խմբագրական են:

Մի անգամ գրել ենք՝ երեւի ինչ-որ մարդկանց դուր է գալիս, որ Ազգային ժողովի դռների մոտ միշտ բողոքի ցույցեր լինեն: Այս դեպքում՝ եկող քառօրյայի ընթացքում վերը նշված փոփոխությունների առիթով են դրանք կրկին լինելու: Չի բացառվում, որ առաջիկայում բողոքողների շարքերը ընդլայնվեն՝ ընտրական օրենսգրքի փոփոխությունների դեմ բողոքողներին ներառելու հաշվին: Կամ գուցե՝ այս բողոքները շատ ավելի կարեւոր խնդիրների վրա սեւեռվելուց մարդկանց ուշադրությունը շեղելու միջոցներից են:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐՆ ԵՆ ՔԱՆԴՈՒՄ

# Ուշադրություն եմ հրավիրում

*Բաց նամակ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ*

*դեսպան Բրայզեին՝ Միացյալ Նահանգներ,*
*դեսպան Պոպովին՝ Ռուսաստանի Դաշնություն,*
*դեսպան Ֆասիեին՝ Ֆրանսիայի Հանրապետություն*

**Հոկտեմբերի 14-ին Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը հանդիպել է Եվլախ քաղաքի հասարակայնության ներկայացուցիչներին: Ինչպես ընդունված է նման դեպքերում, նա հանդես է եկել ելույթով: Այդ մասին Ադրբեջանի նախագահի գրասենյակը տարածել է պաշտոնական հաղորդագրություն:**

**Ես չեմ անդրադառնում նախագահ Ալիեւի ելույթի «պատմագիտական» ընդգծումներին: Դա գիտական շրջանակների խնդիրն է:**

**Ինձ մտահոգում է այն իրողությունը, որ Ադրբեջանի նախագահի գրասենյակը օտարախոս հանրության համար ռուսերեն եւ անգլերեն տարածած հաղորդագրության մեջ որոշակի խմբագրական միջամտություններ է արել: Արդյունքում միջազգային մեդիա միջոցները հնարավորություն չեն ունեցել տեղեկանալու նախագահ Ալիեւի ելույթի մի էական հատվածին: Այն ներկայացրել է Բաքվում լույս տեսնող Bizim yol («Մեր ուղին») ոչ իշխանամետ պարբերականը՝ միայն ադրբեջաներեն լեզվով:**

**Ելույթի հիշյալ հատվածում նախագահ Ալիեւն ասել է. «Իմ անմիջական կարգադրությամբ է քանդվել Բաքվի 26 կոմիսարների հուշահամալիրը»:**

**Հիշեցնեմ, որ այդ հուշահամալիրը Բաքվում խորհրդային իշխանության տարիներին կառուցվել էր այն տեղում, որտեղ ավելի վաղ ամփոփվել էին 26 կոմիսարների աճյունները:**

**Խոսքը վերաբերում է մինչեւ թուրքական զորքերի կողմից 1920թ. սեպտեմբերի 15-ին Բաքվի օկուպացումը գործած կառավարության անդամների վերահուղարկավորմանը: Նրանք, ըստ պաշտոնական վարկածի, գնդակահարվել էին թուրքմենական Ախչա-Կույմա անապատում:**

**Ադրբեջանի նախագահը պաշտոնապես ասել է, որ ինքն է կարգադրել քանդել հուշահամալիրը: Նա փաստորեն դարձել է պատմամշակութային հուշարձանի ավերման, պատմական հիշողության բնաջնջման նախաձեռնող:**

**Այդ ամենը տեղի է ունեցել հակամարտության գոտուց հարյուրավոր կիլոմետրերով հեռու քաղաքում: Իսկ պատճառն այն է, որ 26 կոմիսարների մեծ մասն ազգությամբ հայ է եղել: Կառավարությունը գլխավորել է Կովկասում հայտնի բոլշեւիկ Ստեփան Շահումյանը:**

**Ուշագրավ է, որ նման արտառոց հայտարարություն արել է մի երկրի առաջնորդ, որը միջազգային հեղինակավոր ամբիոններից խոսում է հանդուրժողականության եւ համակեցության մասին, ինչպես նաեւ հարուցում հակամարտության գոտում միջազգային գնահատողական առաքելություն իրականացնելու միջնորդություն:**

**Սեփական կարգադրությամբ պատմամշակութային հուշարձան ավերող եւ պատմական գործիչների գերեզման պղծող պաշտոնատար անձը մի՞թե իրավասու է խոսելու հումանիտար իրավունքից:**

**Ակնկալում եմ, որ այս դիտարկումը պարզ պատկերացում կարող է տալ Ադրբեջանում իշխող քսենոֆոբիայի եւ պատմամշակութային կեղծարարության իրական չափերի մասին, որը, սակայն, այդ երկրի իշխանությունները ջանադրաբար քողարկում են միջազգային հանրությունից՝ չխորշելով անգամ նախագահի ելույթը «ընտրովի» ներկայացնելու էժանագին հնարանքից:**

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության
ԱԺ պատգամավոր

# Առաջին միջազգային բազմաբնույթ ցուցահանդեսը Երեւանում

Այսօր Երեւանի Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում տեղի կունենա «Հայաստանը՝ Ձեր գործընկեր» առաջին միջազգային բազմաբնույթ ցուցահանդեսի բացումը: Այն կգործի մինչեւ հոկտեմբերի 24-ը: Ցուցահանդեսի կազմակերպիչն է «Պրոմէքսպո» ընկերությունը: Մասնակցում են 200-ից ավելի ընկերություններ Հայաստանից, Ռուսաստանից, Մեծ Բրիտանիայից, Գերմանիայից, Իրանից, Բուլղարիայից, Արաբական Միացյալ Էմիրություններից եւ այլ երկրներից: Ցուցահանդեսը բաղկացած է 13 բաժիններից եւ տեղակայված է 3500 քմ տարածքի վրա:

«Պրոմէքսպո» ընկերության տնօրեն Արման Ջաֆարյանը ցուցահանդեսի վերաբերյալ նշել է, որ այն բացառիկ հնարավորություն է տալիս սպառողներին ծանոթանալու տեղական եւ արտասահմանյան կազմակերպությունների լավագույն արտադրանքին, շուկայի նորույթներին, իսկ մասնակից ընկերություններին՝ ձեռք բերելու նոր գործարար կապեր:

Ա. Մ.

# Պանրի գների աննախադեպ բարձրացումը՝ հայկական ագահության հերթական դրսեւորում

*1-ին էջից*



**Կաթնամթերքի միջազգային գներ հասկացություն չենք լսել, եւ բացի դրանից, այս առումով արտերկրից կախում կարծես թե չունենք: Մեր երկրում կաթ եւ կաթնամթերք արտադրվում է, մթերվում եւ պանիր դառնում: Կովերի զանգվածային անկում, նրանց մեջ համաճարակային հիվանդության տարածում կամ որեւէ այլ արտակարգ բան այս օրերին եւս տեղի չի ունեցել: Հայաստանի արոտավայրերում զանգվածային հրդեհներ աշնան այս ամիսներին նույնպես չեն եղել: Վերջ ի վերջո, էլեկտրաէներգիա կամ գազի սակագին նույնպես չի բարձրացել, ոչ էլ այս արտադրողների ստվերային գործունեության մեծ կամ փոքր բացահայտումներ են եղել:**

**Հաջորդը գերիշխող դիրքի առկայությունն է: Բարեբախտաբար, պանրի արտադրության ոլորտում գերիշխող դիրք ունեցող ընկերություն կամ երկու-երեք ընկերություններ չկան: Այս շուկան մրցակցային է, եւ ունենք բազմաթիվ արտադրողներ: Այսինքն՝ որեւէ օլիգարխին մեղադրելու պատճառ եւս այս անգամ չկա: Ուրեմն ի՞նչն է պատճառը, ինչո՞ւ է, ի վերջո, թանկացել պանիրը, ի՞նչ տնտեսական բացատրություն տալ այս երեւույթին:**

**Տնտեսական բացատրություն տալ հնարավոր չէ, քանի որ դա պարզապես գոյություն չունի: Տեղի է ունեցել հակամրցակցային ակնհայտ համաձայնություն՝ պայմանավորված մոտալուտ Ամանորով՝ դրանից երկու ամիս առաջ: Զգուշանալով հասարակության առավել կտրուկ դժգոհությունից, տեղական արտադրողները, որոնք տեղի անտեղի սիրում են կոչ անել աջակցելու իրենց, որոշել են Ամանորի նախօրյակին իրենց արտադրանքը թանկացնելու փոխարեն դա անել 2 ամիս ավելի շուտ: Հավանաբար չեն ցանկացել Նոր տարվա նախօրյակին փչացնել իրենց սպառողների տրամադրությունը, որոշել են անել ավելի շուտ ...**

**Իսկ ի՞նչ է է մտադիր ձեռնարկել այս հակաշուկայական գործելակերպի դեմ պայքարելուն կոչված տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը: Ի պատասխան մեր հարցման, հանձնաժողովի մամուլի ծառայությունից մեզ պատասխանեցին, որ հանձնաժողովը նոր է սկսել պանրի շուկայում ուսումնասիրությունները, համապատասխան տեղեկություններ է ստացել պետտեսչությունների կողմից գործող ընկերությունների մասին, եւ նախնական տվյալներով, կարող են տեղեկացնել, որ գերիշխող դիրք ունեցողներ այս շուկայում չկան: Իսկ թե հանձնաժողովը կարո՞ղ է այս երեւույթը դիտարկել որպես հակամրցակցային համաձայնություն եւ կիրառել համապատասխան միջոցներն այն թույլ չտալու եւ մեղավորներին պատժելու համար, պատասխան ստացանք, որ քանի դեռ նոր է ուսումնասիրվում շուկան, հետեւաբար չեն կարող ասել, թե ինչով է պայմանավորված այս երեւույթը: Մնում է միայն ավելացնել, թե ուսումնասիրված շուկաներում նման երեւույթների դեմ ի՞նչ է արվում, որ չուսումնասիրված շուկաների համար ինչ արվի: Եվ ընդհանրապես, այս հանձնաժողովը նման է «թափառող հարձակվողի», որը ոչ մի կերպ չի իմանում, թե որտեղ է իր տեղը եւ ինչպես գնդակ ստանա գոլ խփելու համար: Սակայն դա այլ խոսակցության թեմա է:**

**Իսկ մինչ այդ ստիպված ենք «վայելել» մեր իսկ մտածելակերպի ամենազազրելի դրսեւորումներից մեկի՝ հայկական ագահության հերթական դառը պտուղները: Իսկ կառավարությունն ու ԿԲ-ն թող խոսեն գնաճի զսպման մասին: Միեւնույնն է, խոսելուց վնաս չկա, բայց օգուտ էլ չկա:**

# ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ամերիկահայ հայտնի մտավորական, «Ապրիլ» գրատան տեր, Թեքեյան մշակութային միության կենտրոնական վարչության անդամ **Հարութ Երեցյանի** հուղարկավորությունն ու թաղումը տեղի են ունենալու այսօր, հոկտեմբերի 22-ին, Հոլիվուդ Հիլզի (ԱՄՆ) Ուայթ Չըրչ եկեղեցում, ժամը 12.00-ին: Թաղման արարողությունից հետո հոգեճաշ է տրվելու Ալտադենայի ԹՄՄ «Բեշկեթյուրյան» կենտրոնում:

Այս տխուր առիթով հանգուցյալի հարազատներին եւ ընկերներին իրենց ցավակցություններն են ներկայացնում Հովսեփ Ուզունյանը (Բըրբենք, ԱՄՆ), Գեղամ Ղարիբջանյանը (Երեւան, ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար), Ժիրայր Դանիելյանը (Բեյրութ, «Կամար» ամսագրի խմբագիր), Պարույր Աղբաշյանը (Բեյրութ), Ռոմեն Կոզմոյանը (Երեւան, «Մոնջյան» հիմնադրամի տնօրեն):

# «ԱԼՄ»-ն հրաժարվում է հանրապետական սփռումից, իսկ «Ա1+»-ը կմրցի «Արմնյուզ»-ի հետ

Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովը (ՀՌԱՀ) երեկ իր նիստում հրապարակել է այն հեռուստաընկերությունների ցանկը, որոնք մասնակցում են կապուղիների մրցույթներին: Նախատեսված 18 մրցույթից ընդամենը 2-ում են ներկայացվել մեկից ավելի հայտեր: Մասնավորապես 11-րդ մրցույթում միմյանց հետ կմրցեն «Ա1+»-ն ու «Արմնյուզը»: Փաթեթները կբացվեն հոկտեմբերի 28-ին: Երկու հայտ է ներկայացվել նաեւ մայրաքաղաքային սփռման, երիտասարդական ուղղվածության եթերային հեռարձակում իրականացնելու համար, որտեղ միմյանց դեմ դուրս կգան «ԱԼՄ»-ն ու «Երեւան»-ը: Այսպիսով՝ «ԱԼՄ»-ն կամավոր հրաժարվում է հանրապետական սփռումից: Հանրապետական սփռումից հրաժարվել է նաեւ «Ար»-ը, որը հայտ է ներկայացրել միայն թվային հեռարձակման ցանցի միջոցով մայրաքաղաքային սփռման մանկապատանեկան, գիտակրթական, դաստիարակչական, ճանաչողական ուղղվածության եթերային հեռարձակում իրականացնելու համար:

Հ. Ա.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

# ՀՀ բարեկեցիկ ապագան՝ անորոշ

Փարիզից Երեւան ուղիղ գծով մոտ 4000 կմ է, Փարիզից Լոս Անջելես՝ 10.000 կմ-ից ավելի: Անգամ տնտեսվարությունից հեռու յուրաքանչյուր հայաստանցի կվկայի, որ Ֆրանսիայից երկու ուղղություններով արտահանվող նույն ապրանքը բարձր կենսամակարդակ ունեցող Լոս Անջելեսում առավել թանկ գնով պետք է վաճառվի: Բայց մի շտապեք նման եզրակացության գալ, քանզի Ֆրանսիայից ներմուծում իրականացնող երկու երկրներում տարբեր տրամաբանություն է իշխում: ԱՄՆ-ում կարծես նախապատվությունը տալիս են շահույթի առումով ներմուծված ապրանքից ժամ առաջ ազատվելուն, ՀՀ-ում ներմուծողները գերադասում են ապրանքները ցուցափեղկերում պահելով իրենց ձեռնտու գնով վաճառել: Հայաստանյան գնորդը նրանց համար հիմնականում կուտակումները բազմապատկելու աղբյուր է, այլ ոչ՝ առ եւ տուրի յուրօրինակ գործընկեր: Ապացո՞ւյց եք ուզում, խնդրեմ, ծանոթացեք:

«Պերիեն» աշխարհի չորս կողմերում վաճառվող հանքային ջուր է: Այս հանքային ջուրը ներկայացնող լուսանկարը վերցրել ենք Նորթ Հոլիվուդի Շարման փողոցի «Բլեք Ջեյ» լոսանջելեսցիների կողմից հայկական համարվող սուպերմարկետի գովազդային թերթիկից. հայկական դրոշակների առկայությունը պայմանավորված է սեպտեմբերի 21-ի անկախության օրվա հիշատակմամբ:

Հիմա ուշադիր նայեք ներկայացված գնին. 4 շիշ 330 գրամանոց «Պերիե»-ները գնահատված են 2 դոլար 49 ցենտ, որը ՀՀ արժույթով կազմում է 900 դրամ, 1 շշի արժեքը՝ 225 դրամ: Հիմա եկեք գուշակենք, թե ՀՀ այս ապրանքը ներմուծելու պարագայում ինչ գնով է հարկավոր վաճառել շահույթ ակնկալելու նպատակով: 10000 կմ եւ 4000 կմ հեռավորությունների տեղափոխման ծախսերի տարբերությունը հուշում է, որ անգամ 200 դրամով վաճառքը որոշակի շահույթ պետք է երաշխավորի: Դա մեր՝ գնորդներիս, տրամաբանությամբ: Բայց պարզվում է՝ գնորդներիս ու ներմուծողների տրամաբանությունը բացարձակապես տարբեր է, որի ապացույցն է այս նույն հանքային ջուրը Երեւանի կենտրոնից մի փոքր հեռու գտնվող սուպերմարկետներից մեկում 529 դրամով վաճառելը: Կենտրոնին համեմատաբար մոտ սուպերմարկետում այն վաճառվում է 690 դրամով: Թվի որեւէ սխալից խուսափելու նպատակով ներկայացնենք նաեւ տառերով. հինգ հարյուր քսանինը դրամ եւ վեց հարյուր իննսուն դրամ:




Համանման պատկերի ենք հանդիպում գերմանական «Հեյնեկեն» գարեջրի հարցում, որը ԱՄՆ-ում վաճառվում է ՀՀ 400 դրամին համարժեք դոլարով, ՀՀ-ում՝ 500 դրամից բարձր արժեքով. նկատենք, որ Գերմանիայից Լոս Անջելես գրեթե 11000 կմ է, մինչեւ Հայաստան՝ մոտ 3500 կմ:

Անշուշտ, ներմուծվող ապրանքի գինը միայն ներմուծողի պահանջ-ցանկությունից չէ, որ կախված է, այլեւ պայմանավորված է երկրի հարկային ու մաքսային օրենսդրություններով: Բայց այսպիսի տարբերությունը, կոնկրետ ԱՄՆ-ի դեպքում՝ 2,5 անգամ բարձր գինը, որեւէ տրամաբանության, թող թույլ տրվի ասել, չի ենթարկվում: Պետական որեւէ համապատասխան պաշտոնյա թե միջազգային մասնագետ-փորձագետ-խորհրդատու արդյոք ի զորո՞ւ է որեւէ փաստարկ ներկայացնել ի պաշտպանություն, ասենք, 529 դրամ գնի: Արդյոք այս թվից գանձվող հարկերից ու մաքսատուրքերի՞ց է նաեւ գոյանում ՀՀ բյուջեն, որից տրվող աշխատավարձերի, կրթաթոշակների ու կենսաթոշակների չափերը հայտնի են հայաստանաբնակներիս: Մենք լավ թե վատ տեղեկացված ենք նաեւ ԱՄՆ-ի եւ ՀՀ-ի 1 բնակչի հաշվով բյուջետային գումարներից: Եթե առաջինում այն 2008-ին 10000 դոլար էր, մեր պարագայում նոր-նոր մոտենում է 1000 դոլարի սահմանին:

Եվ հարցը՝ ի՞նչ է կատարվում Հայաստանում, ինչում է ինքնաբերաբար: Պատասխան, ցավոք, չկա, քանզի չկա պետական այն պաշտոնյան, ով պարտավոր է դնել այսօրինակ հարցը եւ լուծում տալ դրան: Օրինակ՝ խոստումներ հնչեցին, թե կարտոֆիլի բերքահավաքից հետո այս գյուղմթերքի գինը կընկնի: Եթե դրանք հնչեցնողը նկատի ուներ 1 կգ-ի դիմաց այսօրվա 180-220 դրամ գինը, կարծես այն հեռու է գնորդի սպասումից, քանզի նախորդ տարում կարտոֆիլի գինը կիսով չափ պակաս էր: Իսկ հիմա ներկայացնենք այս ապրանքի գինը ԱՄՆ-ում. լուսանկարում պատկերված 10 լայբը 4,5 կգ-ն է, որը գնահատված է 1 դոլարով: ՀՀ դրամի վերածելու արդյունքում 1 կգ-ն ստացվում է 80 դրամ, որպիսի գնի մասին մենք ստիպված ենք երազել: Հավաստացնեք, նույն պատկերն է կաղամբի ու պղպեղի, մրգերի ու պահածոների, բազմաթիվ այլ ապրանքատեսակների ու խմբերի առումով, որոնց թերթի էջի սղության պատճառով կանդրադառնանք այլ անգամ: Տողերիս հեղինակը «սարսափելի է» ցանկանում գնահատել ճաշերի պարտադիր բաղկացուցիչ մաս կազմող սոխի 1 կգ-ի գինը Հայաստանում, որը գրեթե 1 դոլար է: Լուսանկարում պատկերվածը Լոս Անջելեսի «Վալլարասու» սուպերմարկետի գովազդային թերթիկից է վերցվել. 6 լայբը, որը ՀՀ քաշային արտահայտությամբ 2,7 կգ է, նույնպես 1 դոլար է: Յոթերորդ տասնամյակն ապրող ՀՀ քաղաքացիս ոչ մի կերպ չի կարողանում հասկանալ, թե ինչ է կատարվում Հայաստանում, ինչ ուժեր ու գործընթացներ են ուղղորդում երկիրը, երբ է հույսի ու լույսի ինչ-որ նշան երեւալու հայկական իրականությունում: Պատահական չէ, որ իմ ոչ ընդգծված հոռետեսությունը ամեն պահի է հանդիպում շրջապատիս բացարձակ մեծամասնության ակնհայտ վրդովմունքին ու զայրույթին. այս երկիրը ապագա չունի:

Հեղինակն առայժմ այս կարծիքին հակադրվողների շարքում է:

**ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ**




# ՀԴՄ կտրոնը «մոռանում» են տալ «Սթարում», իսկ մանրադրամը՝ «Երեւան սիթիում»

## *Երեւանյան սուպերմարկետները միայն արտաքնապես են քաղաքակիրթ երեւում*

Երեւանյան սուպերմարկետներում սպասարկման մակարդակն իսկապես որոշակիորեն բարձր էր այլ առեւտրային օբյեկտներից: Սակայն միայն որոշակիորեն, քանի որ շատ ու շատ առումներով մեր սուպերմարկետները դեռ հեռու են արեւմտյան երկրների սուպերմարկետների սպասարկման մակարդակից:

Առաջին հանգամանքը, որն առանձնացնում էր սուպերմարկետներին այլ առեւտրային օբյեկտներից այն էր, որ այնտեղ անհրաժեշտ չէր լինում ՀԴՄ կտրոններ պահանջել՝ դրամարկղերի հսկիչները դրանք տպում եւ տեղադրում են գնումների փաթեթի մեջ: Սակայն դա բնորոշ է միայն սուպերմարկետների ցանցի մեջ մտնողներին, իսկ մյուս սուպերմարկետներում իրավիճակն առանձնապես չի տարբերվում այլ խանութներից՝ դրամարկղում վճարումները կատարելուց հետո, աշխատակցուհին համակարգչից վերացնում է գնումների արժեքը եւ «մոռանում» տրամադրել ՀԴՄ կտրոնը: Վերջերս այն սկսել են «մոռանալ» տրամադրել, օրինակ, «Սթար» սուպերմարկետներում: Սպառողներս էլ առանձնապես հակված չենք ամեն մի քանի հարյուր դրամի համար նյարդեր քայքայելու եւ պահանջելու այն, ինչ պարտավոր է լինել օրենքով: Առավել եւս, որ կառավարությունն էլ շատ «խելամտորեն» փոխել է ՀԴՄ-ների բոնուսների տրամադրման պայմանները եւ դրանցով գնումների արժեքի



նախկին 2,5-4 տոկոսի փոխարեն այժմ տրամադրում է ընդամենը 1 տոկոսը: Առանձին խանութներում ՀԴՄ կտրոն չտրամադրելու համար անգամ պետեկամուտների կոմիտեի կողմից 5 օր գործունեությունը կասեցնելուց հետո շարունակում են կտրոններ չտրամադրել:

«Երեւան սիթի» սուպերմարկետներում ՀԴՄ կտրոն տրամադրում են, բայց այստեղ էլ այլ խորամանկություններ են բանեցնում: Նախ՝ գների այսպես կոչված 9-ով վերջացող համակարգը: Շատերն են միամիտ հարց տալիս, թե, օրինակ, 569 դրամ ապրանքի համար 1 դրամն ինչպե՞ս են վերադարձնելու: Պատասխանը մեկն է՝ բնականաբար, չեն վերադարձնելու, այլ կլորացնելու են հօգուտ սուպերմարկետի սեփականատիրոջ: Սակայն այս սուպերմարկետների ցանցում սպառողների մանրադրամները յուրացնելու մեջ եւս մեկ «առաջադիմական» քայլ են կատարել: Եթե նախկինում, գնումների արդյունքում 1-4-ով վերջացող գումարի դեպքում գումարը կլորացվում էր հօգուտ սպառողի, այսինքն՝ այդ չափով իջեցվում էր, ապա հիմա արդեն 4-ով ավարտվող գնումների գումարային արժեքի դեպքում, հակառակ մաթեմատիկայի կանոնների, սկսել են կլորացնել հօգուտ սուպերմարկետի: Եթե սրան էլ ավելացնենք, որ մինչեւ տարեվերջ գործող զեղչ քարտերը, օգոստոս-սեպտեմբերից սկսում են հետ վերցնել, ապա ակամա եզրակացնում ես, որ սուպերմարկետների ցանցի սեփականատեր Սամվել Ալեքսանյանի գործերն այնքան էլ լավ չեն, եւ նա հաճախորդների մանրադրամների եւ մնացած մանր խորամանկությունների հույսին է մնացել:

Եվս մեկ հանգամանք, որը խոսում է մեզանում սպասարկման մակարդակի՝ զարգացած երկրներից անհուսորեն հետ մնալու մասին: Եթե հանկարծ պատռվի շաքարավազի պարկը կամ կոտրվի գնված հավկիթը, օրինակ, սուպերմարկետի դրամարկղի մոտ, ինչպե՞ս պետք է վարվեն եւ ինչպե՞ս են վարվում սուպերմարկետում տվյալ հաճախորդի հետ: Օրինակ՝ ֆրանսիական «Մոնոպրի» կամ ամերիկյան «Ուոլմարթ սթոր» սուպերմարկետներում, անկախ նրանից, թե ում մեղավորությամբ, պատահականությամբ կամ մեկ այլ պատճառով է դա տեղի ունենում, անմիջապես ներողություն են խնդրում հաճախորդից եւ մեկ պարկ շաքարավազի կամ մեկ տուփ հավկիթի փոխարեն անվճար տրամադրում են երկուսը: Իսկ երբ դա լինում է «Երեւան սիթի՞ում»: Նախ՝ սուպերմարկետի աշխատակիցներն անմիջապես հեռացնում են մեղքն իրենցից, չհասկանալով, որ եթե անգամ նման բան տեղի է ունեցել պատահականության հետեւանքով, ապա ամեն դեպքում քաղաքացին չպետք է տուժի: Մեղքն իրենցից հեռացնելուց հետո մեր սուպերմարկետի աշխատակիցները, մեկ այլ՝ ամբողջական պարկ շաքարավազով փոխարինելու փոխարեն, այդ նույն պատռված պարկով շաքարավազը, բնականաբար առանց թափվածի փոխարեն քաշն ավելացնելու, ամբողջությամբ տեղափոխում են մեկ այլ պարկի մեջ եւ գանձում ամբողջական պարկի գումարը: Կամ տուփի մեջ գտնվող կոտրված հավկիթներն առաջարկում են տանել այդ վիճակում, ասելով, որ ոչ բոլորն են կոտրվել: Հենց այդպես: Դեռ լավ է՝ չեն պահանջում վճարել սուպերմարկետի տարածքի աղտոտման համար:

Այնպես որ մեծ տարածքներով, գեղեցիկ դասավորված եւ բազմազան տեսականիով սուպերմարկետներ ունենալը քաղաքակիրթ լինելու համար բավարար չէ: Վարկանիշի առումով սուպերմարկետների համար առաջնային ցուցանիշը հաճախորդների սպասարկման մակարդակն է, որով, ինչպես արդեն ներկայացրինք, «Երեւան սիթի»-ները, «Սթար»-ները, «Սաս»-երը եւ մյուսները դեռ շատ անելիքներ ունեն՝ եթե, իհարկե, նման ցանկություն էլ ունենան:

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

# Պուտինը Սերդյուկովի հետ «դու»-ով խոսեց

Ռուսաստանի վարչապետ Վլադիմիր Պուտինը պահանջել է պաշտպանության նախարար Անատոլի Սերդյուկովից՝ հրաժարական տալ: Այս մասին հաղորդում են որոշ ռուսական աղբյուրներ՝ հավելելով. «Պուտինը խիստ խոսակցություն է ունեցել Սերդյուկովի հետ, դիմել է նրան «դու»-ով եւ պահանջել է, որ վերջինս դեկտեմբերի մեկից՝ «այլ պաշտոնի անցնելու» կապակցությամբ, պաշտոնաթող լինելու մասին դիմում գրի»:

Արդեն 3 տարի պաշտոնավարող (2007-ի փետրվարից), Ռուսաստանի վարչապետի առաջին տեղակալ Վիկտոր Զուբկովի փեսա Սերդյուկովի եւ ՌԴ վարչապետի տարաձայնությունները սկսվել են դեռեւս այս տարվա սեպտեմբերից, երբ Սերդյուկովն այցելեց Ռյազանի մերձակայքում գտնվող դեսանտային զորքերի ուսումնական կենտրոն: Ինչպես հետագայում պատմում են ականատեսները, Սերդյուկովը հրապարակավ արտահայտել է իր դժգոհությունը ուսումնական կենտրոնի ղեկավարին, որ վերջինս թույլ է տվել կենտրոնի տարածքում կառուցել եկեղեցի: Հոկտեմբերի 15-ին 135 հասարակական կազմակերպություններ ներառող Ռուսաստանի դեսանտայինների միությունը հրապարակեց պաշտոնական դիմում՝ նախագահ Մեդվեդեւին, պատրիարք Կիրիլին, պահանջելով «պատասխանատվության ենթարկել պաշտպանության նախարարին, քանի որ նա բավական կոպիտ տոնով է խոսել դեսանտական ուսումնական կենտրոնի հրամանատար, Ռուսաստանի հերոս Անդրեյ Կրասովի հետ՝ կապված եկեղեցու կառուցման հետ, որը, սակայն, կառուցվում է ոչ թե բյուջետային, այլ նվիրատվական միջոցներով»:

Ռուսաստանի պաշտպանության նախարարությունը դեռեւս պաշտոնապես չի մեկնաբանել իրավիճակը. միայն, համաձայն ՌԻԱ-Նովոստի գործակալության, ՌԴ կառավարության անանուն աղբյուրը անհեթեթություն է որակել Սերդյուկովի հրաժարականի մասին տեղեկությունները: Նախարար Սերդյուկովը այժմ գտնվում է Ղրիմում, որտեղ ընթանում է ԱՊՀ երկրների պաշտպանության նախարարների համագումար: Նախարարի բացակայության պայմաններում որոշ մեկնաբանություններ ներկայացրել է ՌԴ դեսանտային զորքերի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Վլադիմիր Շամանովը. «Ուսումնական կենտրոնում նախարարն իրոք արտահայտել է իր մտահոգությունները՝ կապված հենց կենտրոնի տարածքում եկեղեցու կառուցման փաստի հետ: Սակայն դա կապված է այն հանգամանքի հետ, որ նպատակահարմար չէ եկեղեցի կառուցել այն զորամասերում, որտեղ կուրսանտները գտնվում են բավական կարճ ժամանակ: Անատոլի Սերդյուկովն ընդամենը առաջարկել է տեղափոխել եկեղեցին այլ վայր: Այսքանով հանդերձ՝ ես կցանկանայի, որ այս միջադեպին քաղաքական ենթատեքստեր չտրվեն, զորքերում իրավիճակն այսօր բավական նորմալ է», ասել է Շամանովը: Ուսումնական կենտրոնի սպաներն իրենց հերթին նշել են, որ եկեղեցին կառուցվում է հատկապես այդ տարածքում, որովհետեւ «հաջորդ տարվանից այստեղ դասընթացներ են անցնելու բանակային հոգեւորականները»: Իսկ Ռյազանում հրատարակվող «Պրիոբրոժենիե» թերթը տեղեկացնում է, որ «գրեթե պատրաստ եկեղեցին արդեն իսկ այցելել են 150 դեսանտայիններ»:

Ինչեւէ, արդյոք միայն «եկեղեցու պատմությո՞ւնն» է ստիպել վարչապետ Պուտինին «դու»-ով դիմել Սերդյուկովին»: Պարզվում է՝ այդպես չէ: Նախկինում Դաշնության հարկային ծառայության պետ Սերդյուկովը, երբ դարձավ պաշտպանության նախարար, իր առաջին իսկ քայլերով արժանացավ մի շարք ռազմական փորձագետների, բանակի հրամանատարների, տարբեր սպաների քննադատությանը: Այդ քննադատներից են նաեւ Ռյազանի դեսանտական ուսումնական կենտրոնի հրամանատար, ՌԴ հերոս Անդրեյ Կրասովը, Ռուսաստանի դեսանտայինների միության նախագահ Վլադիսլավ Աչալովը: Հենց վերջիններիս խոսքերով՝ Սերդյուկովի «կոպիտ խոսքերը» դեսանտական կենտրոնում ամենեւին էլ պատահական չեն. «Սերդյուկովն ուզում է առհասարակ ապամոնտաժել դեսանտային ուժերը»: ՌԴ-ի ՊՆ դեսանտային զորքերի հրամանատար Շամանովն այս կապակցությամբ նշել է. «Նախ՝ դեսանտային ուժերի սպայական կազմը պահպանվում է, ապա՝ նախատեսվում է ստեղծել եւս երկու շրջանային դեսանտական ստորաբաժանումներ, որն իր հերթին կբարձրացնի մեր զորքերի ներուժը»: Ուրեմն ո՞վ է իրավացի, ո՞ւմ մտահոգություններն են առավել հիմնավորված: Նշենք մի «ոչ էական հանգամանք». ՌԴ Դեսանտայինների միության նախագահ Աչալովը՝ 1989-90-ին եղել է Ռուսաստանի դեսանտային զորքերի հրամանատար, հետո ազատվել է աշխատանքից: Այնուհետեւ Աչալովին նորից ընդգրկում են Դաշնության պաշտպանության համակարգի հրամանատարության կազմ՝ այս անգամ ամենաբարձր պաշտոնը տալով. 1993-ին նա վարչապետ Ռուցկոյի կաբինետում պաշտպանության նախարարն էր: Այս տարվա հոկտեմբերի 4-ին հարցազրույց տալով ռուսական պարբերականներից մեկին՝ Աչալովը նշեց. «Ես մինչեւ այսօր էլ ինձ համարում եմ օրենքով ՌԴ պաշտպանության նախարար»: Երկու շաբաթ հետո, ինչպես արդեն նշեցինք, «Պուտինը «դու»-ով խոսեց Ղրիմ գործուղված նախարար Սերդյուկովի հետ»:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

«ՖԱՅՆԵՆՇԸԼ ԹԱՅՄՍ»

# Բազմաբեւեռ Եվրոպային պետք են նոր կանոններ

1990-ականներին շատերը կարծում էին, որ ԵՄ-ը եւ ՆԱՏՕ-ն կընդլայնվեն, մինչեւ որ եվրոպական բոլոր պետությունները ընդունեն իրենց սկզբունքները: Բայց հիմա Ռուսաստանը բավականաչափ ամրապնդվել է եւ անվտանգության նոր կառույց ստեղծելու կոչեր է անում, իսկ Թուրքիան բավական անկախ քաղաքականություն է վարում եւ ձգտում է ընդլայնել իր դերը: Այս կապակցությամբ Լոնդոնի «Ֆայնենշըլ թայմս» թերթը գրում է, որ ԱՄՆ-ը այլեւս «լրիվ դրույքով եվրոպական տերություն» չէ, քանի որ խրված է Աֆղանստանի, Իրանի եւ հզորացող Չինաստանի հետ կապված խնդիրների մեջ:

Եվրոպայում ձեւավորվում է 3 բեւեռ. ԵՄ, Ռուսաստան եւ Թուրքիա: Նրանք բոլորն էլ մշակում են «հարեւանության քաղաքականություն», որի խնդիրն է ներգործել նրանց մասամբ համընկնող ազդեցության ոլորտների վրա. Բալկաններ, Արեւելյան Եվրոպա, Կովկաս եւ Կենտրոնական Ասիա: Ներկայիս կառույցներն անկարող են կանխել ճգնաժամերը կամ կարգավորել սառեցված հակամարտությունները:

Թերթը Դովիլում կայացած Ֆրանսիայի, Գերմանիայի եւ Ռուսաստանի ղեկավարների հանդիպման կապակցությամբ գրում է, որ եռակողմ գագաթաժողովի օրակարգը ճիշտ էր, բայց մասնակիցների կազմը՝ սխալ: Ուստի Եվրամիությանը խորհուրդ էր տրվում Ռուսաստանի եւ Թուրքիայի հետ սկսել ոչ պաշտոնական «անվտանգության եռախոսություն»: Պետք է ձգտել ոչ թե «եռաբեւեռ», այլ եռակողմ Եվրոպայի ստեղծմանը, նշում է բրիտանական թերթը: Դա թույլ կտա պահպանել «միասնական ԵՄ, հետկայսերական Ռուսաստան եւ եվրոպական Թուրքիա»:

# ՆԱՏՕ-ն փորձում է բանակցել թալիբ առաջնորդների հետ

ՆԱՏՕ-ն «Թալիբան» շարժման առաջնորդներին կոչ է անում սկսել հաշտության բանակցություններ, որոնք պետք է վերջ դնեն Աֆղանստանի պատերազմին: Բանակցությունները ենթադրում են անձնական խորհրդակցություններ «Թալիբանի» բարձրագույն ղեկավարության ներկայացուցիչների հետ: «Նյու Յորք թայմս» թերթի տվյալներով՝ վերջիններս Պակիստանից արդեն հեռացել են ՆԱՏՕ-ի զինծառայողների աջակցությամբ: Սակայն ՆԱՏՕ-ի անդամ երկրներից մեկը՝ Իտալիան, հերքում է այդ տեղեկությունը:



Թերթի տվյալներով, բանակցությունների առաջին փուլը արդեն տեղի է ունեցել Քաբուլում եւ քաղաքից դուրս: Հանդիպումներին մասնակցել են «Աֆղանստանի նախագահ Համիդ Կարզայի մերձավոր շրջապատի ներկայացուցիչներ, աֆղան թալիբների պատերազմը «վերահսկող» պակիստանյան Քվետա քաղաքի թալիբների խորհրդի անդամներ»:

Բացի դրանից, Աֆղանստանի ղեկավարության ներկայացուցիչները հանդիպումներ են ունեցել «Խականիի ցանցի» առաջնորդների հետ, որը համարվում է երկրի ամենաուժեղ պարտիզանական կազմավորումը: Կայացել են հանդիպումներ նաեւ Փեշավարի խորհրդի անդամների հետ. խորհրդի մարտիկները դիրքավորված են Աֆղանստանի արեւելքում, նշում է թերթը:

Հատկապես ընդգծվում է, որ «Թալիբանի» առաջնորդները Պակիստանից Քաբուլ բանակցելու են եկել՝ ունենալով հուսալի երաշխիք, որ ՆԱՏՕ-ի զինծառայողները իրենց վրա չեն հարձակվի եւ չեն ձերբակալի: Ավելին, թալիբները տեղաշարժվել են ՆԱՏՕ-ի տրամադրած օդանավերով, դաշինքի զորքերի վերահսկողության տակ գտնվող շրջաններ են այցելել ՆԱՏՕ-ի զինծառայողների ուղեկցությամբ:

Թերթը կարծիք է հայտնում, որ «քանի դեռ խռովարարներն իրենց համարում են հաղթող կողմ, այնքան էլ չեն ուզում ինչ-որ պայմանավորվածության հասնել եւ պատերազմը դադարեցնելու մեծ ցանկություն չեն դրսեւորում»: ԿՀՎ-ի ղեկավար Լեոն Պանետտայի խոսքերով՝ «թալիբները հաշտության լուրջ փորձեր առայժմ չեն ձեռնարկում»:

# Հ. Քլինթոնը դեմ է Պաղեստինի պետության միակողմանի հռչակմանը

ԱՄՆ պետքարտուղար **Հիլարի Քլինթոնը** դեմ է արտահայտվել Պաղեստինյան ինքնավարության ղեկավարության այն մտադրությանը, որ միակողմանիորեն հռչակվի Պաղեստինի պետություն եւ ապա ճանաչվի միջազգային կառույցներում:

Հ. Քլինթոնը Վաշինգտոնում ելույթ ունենալով ընդգծել է, որ Պաղեստինի պետությունը կարող է ստեղծվել միայն հաշտության ուղղակի եւ երկկողմ (իսրայելա-պաղեստինյան) բանակցությունների շնորհիվ: Այդ մասին հաղորդում է Newsru Israel կայքը:

ԱՄՆ արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարը նշել է, որ պաղեստինա-իսրայելական բանակցությունները ընդհատված են բավական բարդ իրավիճակում, եւ չկա շուտափույթ լուծում, որը թույլ կտար անմիջապես հաշտության մշտական համաձայնագիր կնքել Իսրայելի եւ Պաղեստինյան ինքնավարության միջեւ: ԱՄՆ-ը իր կարելին է անում բանակցությունները առաջ մղելու համար եւ կողմերին հորդորում է ձեռնպահ մնալ առաջընթացին խոչընդոտող գործողություններից, ասել է պետքարտուղարը:

Հ. Քլինթոնը արտահայտել է ԱՄՆ-ի այն տեսակետը, որ երկու ժողովուրդների համար պետք է ստեղծվի երկու պետություն 1967 թ. սահմանների հիման վրա եւ տարածքների փոխանակմամբ: Դրա շնորհիվ Իսրայելի կողքին պետք է ստեղծվի Պաղեստինի պետություն, եւ պաղեստինցիները պետք է հրաժարվեն հարեւանների հանդեպ բոլոր նկրտումներից, ասել է Հ. Քլինթոնը:

Պետքարտուղարը Պաղեստինյան ինքնավարությանը կոչ է արել դադարեցնել հակաիսրայելական քարոզչությունը եւ ազատ արձակել Գիլադ Շալիտին: Նա մերձավորարեւելյան երկրներին հորդորել է այլեւս չօժանդակել ահաբեկչական կազմակերպություններին, առաջին հերթին՝ «Հզբոլլահին»: Իսկ Այսրհորդանանում հրեական ավանների կառուցումը պետք է սառեցվի:

# 151 քուրդ գործիչների դատավարություն Դիարբեքիրում

Փարիզի եւ Ժնեւի իրավապաշտպան կազմակերպությունները տեղեկացնում են, որ հոկտեմբերի 18-ին Դիարբեքիրում սկսվել է քրդերի քաղաքացիական հասարակության 151 ներկայացուցիչների՝ տեղական պատգամավորների, փաստաբանների, արհմիութենական գործիչների, իրապաշտպանների, մտավորականների, լրագրողների եւ պաշտոնյաների դատավարությունը:

Մարդու իրավունքների լիգաների միջազգային ֆեդերացիայի (FIDH) եւ Հակակտտանքային համաշխարհային կազմակերպության (OMCT) կից ծրագիրը հանդիսացող Իրավապաշտպանների պաշտպանության դիտարանը, ինչպես նաեւ թուրքական «Մարդու իրավունքների ընկերակցությունը» (IHD) ներկա են գտնվել դատավարության բացմանը եւ համերաշխության ուղերձ են հղել:

Թուրքիայից եւ ողջ աշխարհից բազմաթիվ դիտորդներ, դիվանագետներ, լրագրողներ, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ են եկել Դիարբեքիր, բայց քչերին է հաջողվել մուտք գործել դատարանի դահլիճ:

Ամբաստանյալների թվում են քուրդ հայտնի իրավապաշտպաններ Մուհառեմ Էրբեյը, Ռոզա Էրդեդեն եւ Արսլան Եոզդեմիրը, որոնք ձերբակալվել են Դիարբեքիրում 2009-ի վերջերին եւ 2010-ի սկզբներին:

Թուրքական քրեական դատարանը կազմել է 7578 էջանոց մեղադրական եզրակացություն, որի միայն ընթերցումը կտեւի մոտ 30 օր:

Իրավապաշտպան կազմակերպությունները պաշտոնական մարմիններին կոչ են անում անցկացնել արդար դատավարություն, որը կհամապատասխաներ Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքներին վերաբերող միջազգային պայմանագրի 14-րդ հոդվածի պահանջներին:

# Ճգնաժամի շնորհիվ ԱՄՆ կառավարությունը 25 միլիարդ է ստացել

Ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում ԱՄՆ բանկային համակարգի օժանդակմանն ուղղված TARP ծրագրի մի մասի իրացմամբ երկրի կառավարությունը ստացել է 25 մլրդ դոլար: 2008-ի հոկտեմբերին պետությունը վարկային ճգնաժամի պատճառով ֆինանսական ծանր վիճակում հայտնված բանկերին եւ ապահովագրական ընկերություններին հատկացրեց 309 մլրդ դոլար, հիշեցնում է Բլումբերգ գործակալությունը:

Ծրագրի իրացումից ստացված եկամուտներով հնարավոր կլինի երկու տասնամյակ հովանավորել Արժեթղթերի եւ սակարանների հանձնաժողովի գործունեությունը:

Այդ ներդրումների եկամտաբերությունը երկու տարում կազմեց 8,2 տոկոս: Սա անչափ բարձր արդյունքն է ներդրումների մյուս տեսակների համեմատությամբ: Օրինակ, պակաս եկամուտներ կբերեին ներդրումները երկարաժամկետ ամերիկյան պարտատոմսերում, բաժնետիրական ներդրումային ֆոնդերում կամ բանկային դեպոզիտներում:

Առավել շահավետ են եղել միայն ԱՄՆ ֆոնդային շուկայում եւ ոսկու շուկայում կատարված ներդրումները (24 տոկոս եւ 6,6 տոկոս):

Կառավարությունը բանկերում կատարած ներդրումներից կարողացել է եկամուտ ստանալ շատ մեղմ ֆինանսական քաղաքականության շնորհիվ, որը ֆինանսական կազմակերպություններին թույլ տվեց միջոցներ փոխ առնել գրեթե զրոյական տոկոսներով: Բացի դրանից, ֆինանսական համակարգին օգնեց հիպոթեկային պարտատոմսերի եւ ֆինանսական այլ գործիքների գնումը Դաշնային պահուստային համակարգի կողմից: Բանկային համակարգի կայունացումը եւ ակտիվների գների անկման դադարեցումը բանկերին թույլ տվեցին շահույթ ստանալ եւ պետությանը վճարել պարտքերը:

# Հաղթական տուր «Միկայի» շախմատիստների համար

## Տղամարդիկ՝ առաջատար, կանայք՝ 3-րդ տեղում

***Շախմատի Եվրոպայի ակումբային առաջնության 4-րդ տուրը հաղթական էր «Միկայի» 2 թիմերի համար էլ: Տղամարդիկ 5-1 հաշվով ջախջախեցին առաջատարներից մեկին՝ բոսնիական «Բիհացին», իսկ կանայք առավելության հասան Բելգրադի [illegible]-ի նկատմամբ (3-1): Այս հաղթանակների շնորհիվ մեր 2 թիմերն էլ առաջատարների խմբում են:***




Ինչպես եւ կանխատեսել էինք, տղամարդկանց «Միկա» թիմը հաղթանակ տարավ «Բիհացի» նկատմամբ: Առաջին խաղատախտակի վրա Լեւոն Արոնյանը պարտության մատնեց Հրվոջե Սթեւիչին: Դա Արոնյանի 3-րդ անընդմեջ հաղթանակն էր: 2-3-րդ խաղատախտակների վրա Վլադիմիր Հակոբյանն ու Գաբրիել Սարգսյանը հաշտություն կնքեցին համապատասխանաբար Էմիր Դիզդարեւիչի եւ Զոլթան Գյիմեսիի հետ: Արման Փաշիկյանը հաղթեց Իբրո Սարիչին, Տիգրան Պետրոսյանը պարտության մատնեց Բոյան Կուրաիցային, Զավեն Անդրեասյանն էլ առավելության հասավ Մուհամեդ Բորիչի նկատմամբ:

Կանանց «Միկա» թիմի հաղթանակն ապահովեցին Հարիկա Դրոնավալին եւ Լիլիթ Մկրտչյանը՝ պարտության մատնելով համապատասխանաբար Իննա Գապոնենկոյին եւ Իրինա Չելյուսկինային: Էլինա Դանիելյանը ոչ-ոքի խաղաց Նատաշա Բոյկովիչի հետ, իսկ Լիլիթ Գալոյանը հաշտություն կնքեց Տատյանա Վասիլեւիչի հետ:

Տղամարդկանց մրցաշարում միայն երեք թիմեր՝ «Միկան», ադրբեջանական ՍՈԿԱՐ-ը եւ Սարատովի «Էկոնոմիստն» են հաղթել բոլոր 4 մրցախաղերում: Բոլոր պարտիաներում վաստակած միավորներով (18,5) առջեւում են ՍՈԿԱՐ-ն ու «Միկան», որը միայն լրացուցիչ գործակիցներով է զիջում ադրբեջանական թիմին: «Էկոնոմիստն» ունի 18 միավոր:

«Միկան» լավ հնարավորություն ունի 5-րդ տուրից հետո միանձնյա գլխավորելու աղյուսակը: Մեր շախմատիստները մրցելու են չեխական «G-Team»-ի հետ, որը 4 տուրից հետո վաստակած 7 միավորով 4-րդ տեղում է: Մինչդեռ «Էկոնոմիստն» ու ՍՈԿԱՐ-ը մրցելու են միմյանց հետ: 4-րդ տուրում «G-Team»-ը 4-2 հաշվով պարտության մատնեց Ստոկհոլմի «Վիկինգին»: Չեխական թիմի կազմում 2 շախմատիստներ՝ Վիկտոր Լազնիչկան (2690) եւ Զբինեկ Հրաչեկը (2633) ունեն 2600-ից բարձր վարկանիշ:

ՍՈԿԱՐ-ը 5-1 հաշվով առավելության հասավ բելառուսական «Վեսնիանկայի» նկատմամբ, իսկ «Էկոնոմիստը» 4-2 հաշվով հաղթեց Մոսկվայի շախմատի տան թիմին: Սանկտ Պետերբուրգի շախմատի ակումբի թիմը 5-1 հաշվով պարտության մատնեց Օսլոյի «Շակսելսկապին»: Այս անգամ Սանկտ Պետերբուրգի թիմի կազմում բացակայում էր Սերգեյ Մովսիսյանը:

Կանանց մրցաշարում «Միկան» 6 միավորով ընթանում է 3-րդ տեղում: Ի դեպ, բոլոր պարտիաներում վաստակած միավորների քանակով (11,5) «Միկան» լավագույն ցուցանիշն ունի: Իսկ աղյուսակը 7 միավորով գլխավորում են ռուսական AVS-ը եւ Թբիլիսիի «Սամայան», որոնց մրցավեճն ավարտվեց ոչ-ոքի: Բոլոր 4 պարտիաներում էլ մրցակիցները հաշտություն կնքեցին: Միավորը բաժանեցին Ջիբուրդանիձեն ու Ստեֆանովան, Զավախիշվիլին ու Լահնոն, Մելիան ու Պոգոնինան, Խուրցիձեն ու Մուզիչուկը:

5-ական միավոր ունեն Մոնտե Կառլոյի թիմը եւ Սանկտ Պետերբուրգի շախմատի ակումբի շախմատիստուհիները: 5-րդ տուրում «Միկան» հանդիպելու է առաջատարներից մեկի՝ AVS-ի հետ: Այդ հանդիպման արդյունքը չափազանց մեծ նշանակություն ունի մեդալների վերջնական բաշխման հարցում: Չէ՞ որ մրցաշարի ավարտին մնացել է ընդամենը 3 տուր: «Սամայայի» մրցակիցը կլինի Սանկտ Պետերբուրգի շախմատի ակումբի թիմը:

# Բեյլի հեթ տրիկն էլ չփրկեց «Տոտենհեմին»



**Ֆուտբոլի չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարի 3-րդ տուրի հերթական հանդիպումներից պայքարի դրամատիզմով հատկապես աչքի ընկավ «Ինտեր»-«Տոտենհեմ» հանդիպումը, որում չեմպիոնների ներկայիս գավաթակիրը հաղթեց 4-3 հաշվով: Հանդիպումը շատ հաջող սկսվեց «Ինտերի» համար, որն արդեն 35-րդ րոպեին 4 գնդակ էր խփել մրցակցի դարպասը: 2 անգամ աչքի էր ընկել Էտո'Օ-ն, մեկական գնդակ էլ խփել էին Զանետին ու Ստանկովիչը: Ինչ խոսք, նման հաշվին նպաստեց խաղասկզբում Էուրելիո Գոմեսի հեռացումը խաղադաշտից:**

**Թվում էր, թե «Ինտերը» հեշտ հաղթանակ կտոնի եւ ընդմիջումից հետո կզարգացնի հաջողությունը: Սակայն տեղի ունեցավ անսպասելին: «Տոտենհեմին» հաջողվեց 3 գոլ խփել ու հաշվի տարբերությունը հասցնել նվազագույնի: Հանդիպման հերոսը Բեյլն էր, որը հեթ տրիկի հեղինակ դարձավ:**

**Խաղից հետո թիմերի մարզիչները հետեւյալ կարծիքն արտահայտեցին:**

**Ռաֆայել Բենիտես («Ինտեր»)** - **Մենք հոյակապ անցկացրինք առաջին խաղակեսը, 4 գոլ խփեցինք՝ ցուցադրելով հիանալի ֆուտբոլ: Ընդմիջումից հետո թիմը զգալիորեն թուլացավ՝ հաղթանակը համարելով ապահովված եւ արդեն կիրակնօրյա խաղի մասին էր մտածում: Ճիշտ է, կարեւոր հաղթանակ տոնեցինք, սակայն պետք է այսօրվա սխալներից դասեր քաղենք: Լոնդոնում կայանալիք պատասխան խաղը դժվար է լինելու: «Տոտենհեմը» բարձրակարգ թիմ է: Չնայած խաղասկզբում 4 գոլ բաց թողեց, սակայն ընդմիջումից հետո դրսեւորեց իր ուժը:**

**Գարի Ռեդնապ («Տոտենհեմ»)** - **Առաջին խաղակեսի 0-4 հաշվից հետո մեր գործերը կարող էին ավելի վատ լինել: Անկեղծ ասած, չէի հավատում, որ կարող ենք կրճատել հաշիվը: Թիմի ոգին չկոտրվեց, կարողացավ օգտագործել իր հնարավորությունները: Բեյլը հերթական անգամ իրեն դրսեւորեց որպես բարձրակարգ ֆուտբոլիստ ու հեթ տրիկի հեղինակ դարձավ: Ընդմիջումից հետո մենք ապացուցեցինք, որ «Ինտերի» հետ հնարավոր է հարձակողական ֆուտբոլ ցուցադրել ու գրավել թիմի դարպասը:**

**«Ինտերն» այս հաղթանակից հետո 7 միավորով շարունակում է գլխավորել A խմբի աղյուսակը: «Տոտենհեմն» ունի 4 միավոր, 2-ական միավոր են վաստակել «Տվենտեն» ու «Վերդերը», որոնց մրցավեճն ավարտվեց ոչ-ոքի՝ 1-1:**

**B խմբում 3-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց «Լիոնը»՝ 2-0 հաշվով պարտության մատնելով «Բենֆիկային»: 2-րդ տեղում 6 միավորով «Շալկե-04»-ն է, որը 3-1 հաշվով հաղթեց «Հապոելին»: C խմբում «Մանչեսթր Յունայթեդը» Նանիի խփած միակ գոլի շնորհիվ առավելության հասավ «Բուրսասպորի» նկատմամբ ու վաստակեց 7 միավոր: «Գլազգո Ռեյնջերսը» 5 միավորով 2-րդ տեղում է: Շոտլանդական թիմը ոչ-ոքի (1-1) խաղաց «Վալենսիայի» հետ: Հետաքրքրականն է, որ երկու գոլերն էլ խփեց դաշտի տերերի խաղացող Էդուն: 34-րդ րոպեին նա բացեց հաշիվը՝ գրավելով «Վալենսիայի» դարպասը, իսկ ընդմիջումից անմիջապես հետո գնդակն ուղարկեց սեփական դարպասը:**

**D խմբում «Բարսելոնը» Մեսիի խփած 2 գոլերի շնորհիվ սեփական հարկի տակ հաղթեց «Կոպենհագենին» ու վաստակեց 7 միավոր: «Պանաթինաիկոս»-«Ռուբին» մրցախաղում դարպասները մնացին անառիկ:**

ՖՈՒՏԲՈԼ

# Իսպանացիները խնայեցին հայերին

**Ֆուտբոլի Հայաստանի մինչեւ 19 տարեկանների պատանեկան հավաքականը Լիտվայում անցկացվող Եվրոպայի պատանեկան առաջնության ընտրական մրցաշարի 2-րդ խաղում էլ 0-3 հաշվով պարտություն կրեց իսպանացիներից: 15-րդ րոպեին հաշիվը բացեց Ալվարոն, որն ընդմիջումից քիչ անց 2-րդ գոլը խփեց: Մեկ րոպե անց Սարաբիան 3-րդ գնդակն ուղարկեց Կարեն Իսրայելյանի պաշտպանած դարպասը:**

**Հիշեցնենք, որ առաջին խաղում ՀՀ հավաքականը 0-3 հաշվով զիջել էր Իսրայելի ընտրանուն, իսկ իսպանացիները 6 անպատասխան գնդակ էին խփել Լիտվայի հավաքականի դարպասը: Մեր հավաքականն արդեն կորցրել է հաջորդ փուլ դուրս գալու հնարավորությունները: Հոկտեմբերի 24-ին հայ պատանիներն ավարտական խաղում ուժերը կչափեն լիտվացիների հետ:**

## Ռինգ դուրս կգան 5 հայ բռնցքամարտիկներ

**Այսօր Խարկովում կմեկնարկի բռնցքամարտի Եվրոպայի գավաթի խաղարկությունը: Պատվավոր մրցանակի համար քաշային 10 կարգերում ռինգ դուրս կգան 40 բռնցքամարտիկներ: Նրանցից յուրաքանչյուրը 2-ական մենամարտ կանցկացնի կիսաեզրափակիչում եւ եզրափակիչում:**

**Հայաստանն այդ մրցումներին կներկայացնեն 5 բռնցքամարտիկներ: Հայաստանի բռնցքամարտի հավաքականի գլխավոր մարզիչ Ռաֆայել Մեհրաբյանը թիմում ընդգրկել է Հովհաննես Դանիելյանին (49 կգ), Դերենիկ Գիժլարյանին (52 կգ), Վոլոդյա Հայրապետյանին (64 կգ), Անդրանիկ Հակոբյանին (75 կգ) եւ Արթուր Խաչատրյանին (81 կգ):**

**Մրցաշարի մեկնարկից առաջ հավաքականի անդամներն ուսումնամարզական հավաք են անցկացրել ու լրջորեն են նախապատրաստվել Եվրոպայի գավաթի խաղարկությանը: Այնպես որ նրանցից մեդալների ակնկալիքներ կան:**

## Դարբինյանին փոխարինեց Մելիքյանը

**Ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնության ավարտից 4 տուր առաջ Երեւանի «Կիլիկիայի» գլխավոր մարզչի պաշտոնից ազատվել է Սամվել Դարբինյանը: Ըստ ակումբի մամուլի քարտուղարության, Դարբինյանը պաշտոնանկ է եղել իր դիմումի համաձայն: Հիշեցնենք, որ Դարբինյանը «Կիլիկիայի» ղեկը ստանձնել էր առաջնության մեկնարկից մի քանի տուր հետո՝ փոխարինելով Աբրահամ Խաշմանյանին: Նա ակումբի հետ 3 տարվա պայմանագիր էր կնքել:**

**«Կիլիկիայի» ղեկը ստանձնել է Երեւանի «Արարատի» նախկին ճանաչված ֆուտբոլիստ Բաբկեն Մելիքյանը, որը մարզչական գործունեությամբ է զբաղվել «Միկայում»: Փաստորեն, ընթացիկ մրցաշրջանում «Կիլիկիայում» արդեն 2-րդ անգամ մարզչական փոփոխություն կատարվեց:**

## Ռաուլը գերազանցեց Մյուլլերի ռեկորդը



«Շալկե-04-ի» կազմում չեմպիոնների լիգայի հերթական խաղում 2 գոլ խփելով Իսրայելի «Հապոելի» դարպասը, իսպանացի Ռաուլը եվրոպական գավաթների մրցաշարերում իր գոլերի թիվը հասցրեց 70-ի եւ գերազանցեց ժամանակին Մյունխենի «Բավարիայում» հանդես եկած անվանի ռմբարկու Գերդ Մյուլլերի ռեկորդը: Վերջինս եվրոպական գավաթների մրցաշարերում 69 գնդակ էր խփել (35՝ չեմպիոնների գավաթի, 20՝ գավաթակիրների գավաթի, 11՝ ՈՒԵՖԱ-ի գավաթի, 3՝ Սուպերգավաթի մրցաշարերում):

Ռաուլն իր նախորդ 68 գոլերը խփել է «Ռեալում»: 69 գոլ նա խփել է չեմպիոնների լիգայում, 1 գնդակ էլ իր օգտին է գրանցել Սուպերգավաթի մրցաշարում: Լավագույն ռմբարկուների եռյակը 64 գնդակով եզրափակում է Անդրեյ Շեւչենկոն:

## Պատանիները սկսեցին մրցավեճը

Հունաստանում մեկնարկել է շախմատի աշխարհի պատանեկան առաջնությունը, որն անցկացվում է տարիքային 6 խմբով, 11 տուրով: Մեկնարկային տուրում Հայաստանի 19 պատվիրակներից 12-ը մրցաշարը սկսեցին հաղթանակով: Առաջին միավորը վաստակեցին Արամ Հակոբյանը, Արթուր Հողմրցյանը, Մանուել Պետրոսյանը, Միքայել Մկրտչյանը, Կարեն Կարապետյանը, Տիգրան Հարությունյանը, Հովհաննես Գաբուզյանը, Սամվել Տեր-Սահակյանը, Գրիգոր Դիլանյանը, Սիրանուշ Ղուկասյանը, Սուսաննա Գաբոյանն ու Մարիա Գեւորգյանը:

## Հաղթանակով մեկնարկեց միայն Կառլսենը

Չինաստանի Նանզինի քաղաքում անցկացվում է շախմատի «Մեծ սաղավարտ» մրցանակի նոր խաղարկության առաջին փուլը, որին մասնակցում են 6 գրոսմայստերներ: Մեկնարկային տուրում միայն Մագնուս Կառլսենը հաղթանակ տոնեց՝ պարտության մատնելով Էթիեն Բաքրոյին: Անանդ-Վան Յուե, Թոփալով-Հաշիմով պարտիաներն ավարտվեցին ոչ-ոքի: 2-րդ տուրում կկայանան Անանդ-Կառլսեն, Վան Յուե-Հաշիմով, Բաքրո-Թոփալով պարտիաները:

## Որոշումը կկայացվի հաջորդ տարի

ՖԻՖԱ-ի գլխավոր քարտուղար Ժերոմ Վալկեն հայտարարել է, որ հաջորդ տարի հավանության կարժանանա 5 մրցավարներով խաղն անցկացնելու պրակտիկան, որպեսզի 2014-ի աշխարհի առաջնությունում այն կիրառվի: Ըստ Վալկեի, 2011-ին աշխարհի լավագույն մրցավարները կսկսեն 3-ամյա նախապատրաստությունը Բրազիլիայում կայանալիք ֆուտբոլի համաշխարհային ստուգատեսին: Սպասվում է, որ ՖԻՖԱ-ն նման որոշում կկայացնի 2011-ի հունիսին:

Ընթացիկ մրցաշրջանում 5 մրցավարներով խաղը սպասարկելու պրակտիկան արդեն կիրառվում է չեմպիոնների լիգայի եւ Եվրո-2012-ի ընտրական մրցախաղերում:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

# Օրվա հետքերով

ՍԵՐԳԵՅ ՍՈԲՅԱՆԻՆ

## Մոսկվան ունեցավ նոր քաղաքապետ

Երեկ Մոսկվայի քաղաքային դումայի արտահերթ նիստում ՌԴ մայրաքաղաքի քաղաքապետ ընտրվեց նախագահ Մեդվեդեւի թեկնածու` Սերգեյ Սոբյանինը: Արդեն որպես քաղաքապետ ելույթ ունենալով Մոսկվայի պատգամավորների առջեւ` Տյումենի մարզի նախկին նահանգապետ, ՌԴ կառավարության աշխատակազմի նախկին ղեկավար, իրավաբանական գիտությունների թեկնածու Սոբյանինը հայտնեց իր պատրաստակամությունը` վերանայելու Մոսկվայի զարգացման ծրագիրը:

Սոբյանինի օգտին քվեարկեցին քաղաքային դումայի նիստին ներկա 34 պատգամավորներից 32-ը: Չնայած քվեարկությունը փակ-գաղտնի էր, սակայն նրա արդյունքները արդեն իսկ պարզ էին, քանի որ Մոսկվայի քաղաքային դումայի 35 պատգամավորական տեղերից 32-ը պատկանում է իշխող «Եդինայա Ռոսիա» կուսակցությանը, որն ավելի վաղ հայտարարել էր, որ պաշտպանելու է նախագահ Մեդվեդեւի թեկնածուին. «Մենք կաշխատենք Սոբյանինի հետ ուս ուսի տված», հայտարարել էին կուսակցության ներկայացուցիչները: Երեկ երեկոյան տեղի ունեցավ Մոսկվայի նոր` 52-ամյա քաղաքապետի երդմնակալության արարողությունը, որին մասնակցեց նաեւ նախագահ Մեդվեդեւը: Իսկ նախկին քաղաքապետ Յուրի Լուժկովը մասնակիցների կազմում չկար, պաշտոնական տվյալներով` «խիստ զբաղված լինելու» պատճառաբանությամբ: Լուժկովն այժմ Մոսկվայի միջազգային համալսարանի «Խոշոր քաղաքների կառավարում» ֆակուլտետի դեկանն է եւ երեկ դասախոսություն կարդաց շուրջ 200 ուսանողների համար` «Մոսկվայի զարգացումն ու Ռուսաստանի վերածնունդը» թեմայով:

Նոր քաղաքապետ Սոբյանինը իր ելույթում նշեց. «Վերջին տարիներին Մոսկվան փոխվել է դեպի լավը, սակայն մենք կարող ենք ավելի դինամիկ զարգանալ: Կոռուպցիան եւ բյուրոկրատիան այն չարիքներն են, որոնց համայնապատկերում աննշմարելի են եղել Մոսկվայի ունեցած հաջողությունները»:

**Հ. ԱՓՅԱՆ**

## Մեղադրվում է ՌԴ պատգամավոր Աշոտ Եղիազարյանը

ՌԴ Պետդումայի` Վլադիմիր Ժիրինովսկու ղեկավարած Ռուսաստանի լիբերալ-դեմոկրատական կուսակցության խմբակցության պատգամավոր Աշոտ Եղիազարյանը մեղադրվում է խոշոր չափերի մեքենայություններ կատարելու մեջ, որոնց համար, մեղքն ապացուցվելու դեպքում, սպառնում է 10 տարվա ազատազրկում: Ռուսաստանի գլխավոր դատախազության համապատասխան կառույցը դիմել է Պետդումային` Աշոտ Եղիազարյանին պատգամավորական անձեռնմխելիությունից զրկելու միջնորդությամբ: Ըստ որոշ լուրերի` Աշոտ Եղիազարյանի գտնվելու վայրն անհայտ է: Որոշ ժամանակ առաջ տարբեր լրատվամիջոցներին Ա. Եղիազարյանն ասել էր, որ իր դեմ անվանարկման մեծ արշավ է սկսվել, քանի որ ինքը մի շարք դատական հայցեր է ներկայացրել: Իսկ դատական կատարածուներն, ընդհակառակը, խոսում են Եղիազարյանի` 200 մլն դոլարի հասնող պարտքերի մասին:

**Մ. Խ.**

## Տկլոր Սաակաշվիլու տուրիստական գովազդը

Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլուց PR ակցիաների տեսքով գրեթե ամեն ինչ կարելի է սպասել: Սաակաշվիլու պարագայում այդ հարցին ծառայեցվում է այն ամենը, ինչ որեւէ կերպ առնչվում է Վրաստանի նախագահի անվանը, անձին եւ ընդհանրապես այն հարցերին, որոնց մասին տվյալ պահին խոսում է Սաակաշվիլին:

Սահակաշվիլին Աջարիայի զբոսաշրջային հրողությունները ու բարեմասնությունները ներկայացնելու յուրահատուկ մի ձեւ է գտել: Նախ աջարական ջրերում լողալով անցել է 3,5 կիլոմետր, այնուհետեւ, արդեն ափին, կիսամերկ ու iPad-ը ձեռքին լրագրողներին է ներկայացրել օդի ջերմաստիճանն ու խոնավությունը` ընդգծելով, թե Աջարիայում լողալ կարելի է մինչեւ նոյեմբերի վերջ եւ արդեն մայիսից:

Անկախ թեմայից եւ ներկայացվող հարցից, Սաակաշվիլին, հասկանալի պատճառներով, չէր կարող բաց թողնել կիսամերկ ներկայանալու առիթը` չխոսելու Ռուսաստանի մասին: «Աջարիայի հիանալի եղանակն է պատճառը, որ օկուպանտները ցանկանում են տիրանալ այս հողին», վրացական լրատվամիջոցներին հայտարարել է Վրաստանի նախագահը:

Հետաքրքրական է, որ վրացական լրատվամիջոցները ոչ թե բացառիկության տեսանկյունից են ներկայացրել երկրի նախագահի մերկությունը, այլ նմանեցրել են նրան նման տեսքով հասարակությանը ներկայացած Վլադիմիր Պուտինին եւ Բարաք Օբամային: Մերկ էր լրագրողների հարցերին պատասխանել նաեւ Վենեսուելայի լողափերից մեկում հայտնված Բելառուսի նախագահ Լուկաշենկոն:

Սաակաշվիլու արարքը ծաղրանքի իրենց մոտեցմամբ են հասարակությանը ներկայացրել վրացական որոշ հեռուստաընկերություններ` եւս մերկանալով հեռուստաեթերում:

Մերկությունը հեռուստաեթերին բաժին հանելը կարծես դառնում է ավանդույթ, բայց տվյալ դեպքում Սաակաշվիլին բնավ էլ շահեկան վիճակում չի հայտնվում, այն էլ այնպիսի մի աչլետիկ կազմվածք ունեցողի կողքին, ինչպիսին է Վլադիմիր Պուտինը: Բայց թերեւս ճաշակին ընկեր չկա:

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

### Հայտարարություն

Սույն թվականի հոկտեմբերի 19-ին, ժամը 14:00–ին ՀՀ Սյունիքի մարզի Շամբ համայնքում տեղի կունենա հանքային ջրերի շշալցման և լիմոնադի պատրաստման արտադրամասի շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հասարակական լսումներ: Նախագծային փաստաթղթերին կարելի է ծանոթանալ ք.Երևան Կոմիտաս 29 հասցեում: Հեռ. 22-14-85

## 2010 թվականի հոկտեմբեր ամսվա վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ

**2010 թ. հոկտեմբերի 12-ի ՀՀ ԿԲ խորհրդի նիստին մասնակցում էին` ՀՀ ԿԲ նախագահի տեղակալ Վաչե Գաբրիելյանը, խորհրդի անդամներ Աշոտ Մկրտչյանը, Ամալյա Սարիբեկյանը, Ահարոն Չիլինգարյանը, Անդրանիկ Նորեկյանը, Վախթանգ Աբրահամյանը:**

**Խորհրդի նիստը սկսվեց իրավիճակային հաշվետվության ներկայացմամբ, որտեղ քննարկվեցին գնաճի, արտաքին միջավայրի, իրական, հարկաբյուջետային եւ դրամավարկային հատվածների ընթացիկ զարգացումները: Նիստի ընթացքում անդրադարձ եղավ գնաճի երրորդ եռամսյակի համար կանխատեսված եւ փաստացի ցուցանիշներին: Խորհուրդն արձանագրեց, որ միջազգային շուկայում ցորենի գնի թռիչքաձեւ աճը եւ գյուղատնտեսության ճյուղի խորն անկումը որոշիչ են եղել 12-ամսյա գնաճի կանխատեսված եւ փաստացի ցուցանիշների միջեւ շեղման առումով: Սեպտեմբերին 12-ամսյա գնաճը կազմել է 8.6% հուլիսին կանխատեսված 6%-ի պարագայում, որից 3.3 տոկոսային կետն արձանագրվել է «Միրգ», «Բանջարեղեն եւ կարտոֆիլ» 1.5 տոկոսային կետը` «Հացամթերք» ապրանքախմբերում գների աճի արդյունքում:**

**Ըստ պաշտոնական վիճակագրության, 2010 թ. սեպտեմբերին նախորդ ամսվա նկատմամբ արձանագրվել է 0.2% գնանկում, ինչի պարագայում գնաճի 12-ամսյա ցուցանիշը նվազել է 1 տոկոսային կետով: Գնահատվում է, որ արձանագրված նվազման միտումը կշարունակվի, եւ կանխատեսվող հորիզոնի վերջում այն կգտնվի նպատակային միջակայքի վերին սահմանի մոտ:**

**Եռամսյակի ընթացքում արձանագրվել է 0.3 % գնաճ, ընդ որում, պարենային ապրանքների գները նվազել են 0.2%-ով (նպաստումն ընդհանուր գնաճին -0.1 տոկոսային կետ), ոչ պարենային ապրանքների գները մնացել են գրեթե անփոփոխ, իսկ ծառայությունների սակագներն աճել են 1.1%-ով (նպաստումն ընդհանուր գնաճին 0.3 տոկոսային կետ): Եթե վերջին տարիներին «Բանջարեղեն եւ կարտոֆիլ» եւ «Միրգ» ապրանքախմբերի գների փոփոխությունների նպաստումը եռամսյակի գնաճի ցուցանիշին կազմել է միջինը -2.6 տոկոսային կետ, ապա 2010 թ. երրորդ եռամսյակում նշված երեք ապրանքախմբերի նպաստումը կազմել է 0.1 տոկոսային կետ, այսինքն` 2.7 տոկոսային կետով ավելի, ինչն էլ հանգեցրել է եռամսյակի համար կանխատեսված ցուցանիշից փաստացի արձանագրված ցուցանիշի գրեթե նույն չափով շեղման:**

**2010 թ. հունվար-օգոստոսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ արձանագրվել է 3.1% տնտեսական աճ: Վերջինիս տեմպի նվազումը պայմանավորվել է հիմնականում անբարենպաստ բնակլիմայական պայմանների հետեւանքով գյուղատնտեսությունում (ներկայումս ՀՆԱ-ում իր տեսակարար կշռով երկրորդ ճյուղում) պահպանվող խորը անկմամբ` 17.9%` հիմնականում բուսաբուծության ենթաճյուղում 29.1% անկման հաշվին: Մինչդեռ, տնտեսության մյուս ճյուղերում, ինչպես եւ սպասվում էր, արձանագրվել են համեմատաբար բարձր աճեր:**

**Արդյունաբերության ճյուղում արձանագրվել է ավելացված արժեքի 9.8% աճ` հիմնականում պայմանավորված մետաղական հանքաքարերի արդյունահանման, սննդամթերքի, խմիչքների, ծխախոտային արտադրանքի, քիմիական արդյունաբերության եւ ոսկերչական արտադրատեսակների արտադրության ծավալների աճով, որը ինչպես ներքին, այնպես էլ համաշխարհային տնտեսության վերականգնման պայմաններում արտաքին պահանջարկի աճի արդյունք է: Շինարարության ճյուղի ավելացված արժեքի աճը կազմել է 5.5%, ծառայություններինը` 5.3%:**

**Ինչ վերաբերում է արտաքին ապրանքաշրջանառության ցուցանիշներին, արձանագրվել է ապրանքների արտահանման ծավալների աճի տեմպի ոչ էական արագացում. հունվար-օգոստոսին` նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ արձանագրվել է 43.8% աճ: Ապրանքների ներմուծման ծավալների աճի տեմպը մի փոքր դանդաղել է, եւ աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ կազմել է 21.3%:**

**Ներկայացվեցին նաեւ ՀՀ ֆինանսական շուկայի զարգացումները: Գնաճի զարգացումների վրա առաջարկի գործոնների գերակա ազդեցության պայմաններում ԿԲ-ն առավելապես պահպանողական է եղել` նպատակահարմար գտնելով եռամսյակի ընթացքում անփոփոխ թողնել վերաֆինանսավորման տոկոսադրույքի դեռեւս մայիսին սահմանած 7.25% մակարդակը: Չնայած դրան ռեպո շուկայում միջին շուկայական տոկոսադրույքը նախորդ եռամսյակի համեմատ նվազել է 3.04 տոկոսային կետով` հասնելով 7.13%-ի, միջբանկային ռեպո շուկայում միջին շուկայական տոկոսադրույքը նվազել է 2.57 տոկոսային կետով եւ կազմել 6.61%, ՊԿՊ առաջնային շուկայում միջին տոկոսադրույքը նվազել է 1.81 տոկոսային կետով` հասնելով 10.27%-ի:**

**Արժութային շուկայում 1 ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի փոխարժեքը երրորդ եռամսյակի միջին ցուցանիշը նախորդ եռամսյակի միջինի համեմատ արժեւորվել է 5.15 տոկոսով` կազմելով 365.51 դրամ, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ արժեւորվել է 1.95 տոկոսով: ՀՀ առեւտրային հիմնական գործընկեր երկրների արժույթներից 1 եվրոյի նկատմամբ դրամի փոխարժեքը նախորդ եռամսյակի համեմատ արժեւորվել է 3.75 տոկոսով` կազմելով 472.20 դրամ, իսկ 1 ռուբլու նկատմամբ` արժեւորվել է 9.10 տոկոսով եւ կազմել է 11.65 դրամ:**

**ԿԲ եւ Կառավարության կողմից իրականացվող ապադոլարայնացման միջոցառումների իրականացման արդյունքում դոլարայնացման մակարդակը եռամսյակի ընթացքում նվազել է 3%-ով` դրամային ավանդների 9.4% աճի, արտարժութային ավանդների 0.7%-ով նվազման (բացառելով փոխարժեքի փոփոխությունը` ավելացել են 0.8%-ով) պարագայում: Չնայած դրան, վարկավորման 5.4% աճի հիմնական մասը արտարժույթով է տրամադրվել` ԿԲ-ում առեւտրային բանկերի թղթակցային հաշիվներում կուտակված արտարժութային միջոցների հաշվին:**

**Իրավիճակային հաշվետվության քննարկումից հետո խորհուրդը սկսեց քննարկումներն արտաքին եւ ներքին զարգացումների, դրամավարկային քաղաքականության ուղղությունների վերաբերյալ:**

**2010 թ. առաջին կեսին համաշխարհային տնտեսության` սպասվածից ավելի արագ տեմպերով վերականգնման պայմաններում ԱՄՀ-ը հոկտեմբերին բարձրացրել է համաշխարհային տնտեսական աճի վերաբերյալ գնահատականները` 2010 թ. համար կանխատեսելով 4.8% համաշխարհային տնտեսական աճ: ՀՀ հիմնական գործընկերներից Եվրոգոտու տնտեսական աճի կանխատեսված ցուցանիշը ավելացվել է եւ 2010 թ. համար կազմում է 1.7%: Նվազեցվել են ԱՄՆ եւ Ռուսաստանի տնտեսությունների վերականգնման գնահատականները` առաջինը մասնավոր սպառման ծավալների վերագնահատման արդյունքում, երկրորդը` գյուղատնտեսության ճյուղի անկման պատճառով: Արդյունքում, 2010 թ. համար ԱՄՆ եւ Ռուսաստանի տնտեսական աճերը կանխատեսվել են համապատասխանաբար` 2.6% եւ 4%: Թերեւս 2011 թ. համաշխարհային տնտեսական աճի հեռանկարների առումով ԱՄՀ-ը նախանշել է առավելապես նվազման ուղղությամբ ռիսկեր` պայմանավորված ֆինանսական անկայունության եւ ռիսկերի տարածման եւ համաշխարհային պահանջարկի կառուցվածքային փոփոխությունների հետ: Ինչ վերաբերում է գնաճի վերաբերյալ ԱՄՀ գնահատականներին, անցումային եւ զարգացող երկրներում առաջիկա տարիների համար նախանշվում են բավականին բարձր գնաճային ճնշումներ. 2010 թ. համար կանխատեսվել է 6.2% գնաճ, 2011 թ. համար` 5.2%:**

**ԱՄՆ տնտեսության զարգացումների վերաբերյալ վատատեսական սպասումների ներքո ԱՄՆ Ֆեդերալ պահուստային համակարգի կողմից քանակական ընդլայնման քաղաքականության իրականացման շարունակման վերաբերյալ հայտարարություններից հետո ԱՄՆ դոլարն արժեզրկվել է Եվրոյի նկատմամբ շուրջ 1.5%-ով:**

**Ինչ վերաբերում է միջազգային ապրանքային շուկաներին, ապա եռամսյակի վերջում դրանք բնութագրվում էին գնաճային զարգացումներով (նավթ, հացահատիկ, շաքարավազ):**

**Արտաքին միջավայրի վերոնկարագրյալ իրավիճակում Խորհուրդը գնահատում է, որ ՀՀ-ում գնաճի ձեւավորման գործընթացում շարունակում են որոշիչ մնալ հիմնական ապրանքների միջազգային շուկաներում եռամսյակի ընթացքում դրսեւորված վատատեսական ռիսկերը: Միաժամանակ, եռամսյակի վերջի զարգացումները նոր ռիսկեր են առաջացրել միջազգային շուկաներում գնաճային միջավայրի ձեւավորման առումով:**

**ՀՀ տնտեսության ներքին զարգացումների առումով ՀՀ ԿԲ խորհուրդը համակարծիք է, որ չնայած տնտեսական աճի տեմպերի դանդաղմանը, նկատվում է ներքին պահանջարկի աստիճանական վերականգնում: Վերջինս, սակայն, դեռեւս գնաճային ճնշումներ չի առաջացնում. հարկաբյուջետային փոքր-ինչ ընդլայնողական քաղաքականությունը, մասնավոր ծախսումների ոչ բավարար աճով պայմանավորված գնանկումային ազդակները եւ աշխատուժի շուկայից եկող թույլ գնաճային ազդակները չեզոքացնելով միմյանց, էական գնաճային միջավայր չեն ստեղծում: Մյուս կողմից, գնաճային միջավայրի մեղմանը շարունակում են նպաստել տարեսկզբից դրամավարկային քաղաքականության խստացումը, արտարժութային շուկայի զարգացումները:**

**Խորհուրդն ամփոփեց, որ հաշվի առնելով ներկա իրավիճակը, որում գնաճային միջավայրը շարունակում է ձեւավորվել առաջարկի գործոնների ազդեցության ներքո, ներառյալ պարենային եւ հումքային ապրանքների միջազգային շուկաներում նոր ձեւավորվող գնաճային ռիսկերը, նպատակահարմար է դեռեւս ձեռնպահ մնալ դրամավարկային քաղաքականության խստացումից:**

**2010 թ. հոկտեմբերի 12-ի նիստում առաջիկա ժամանակահատվածի համար սահմանվեցին ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույքի 7.25%, լոմբարդային ռեպոյի 10.25% եւ ներգրավված միջոցների 4.25% մակարդակներ:**

**Հաղորդագրությունից օգտվելու դեպքում հղումը սկզբնաղբյուրին պարտադիր է:**

**ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն**
**հեռ/ֆաքս. 56 37 61**
**էլ-փոստ. mcba@cba.am**
**www.cba.am**
**21.10.2010**

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ` 58-29-60

Լրատվական գործունեություն իրականացնող` «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համար` 02 Ա N 047261, տրված` 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ` 3000, ստորագրված է տպագրության` 21.10.2010, գինը` 100 դրամ, տպագրված է «Նոյյան Տապան» ՍՊԸ տպարանում` Իսահակյան 28: